

Հաստատված է նոր խմբագրությամբ
«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

Նոր խմբագրությամբ գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Գլխավոր տնօրեն՝ Հայկ Եգանյան

Նախագահ՝ Արթուր Զավադյան

«17» հունվարի, 2019թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/085Լ

« __ » _____ 2019թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ՔԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 1. Կանոնակարգի կարգավորման առարկան

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության, որպես կարգավորվող շուկայի օպերատորի, կողմից կազմակերպված շուկաները վերահսկելու շրջանակը, վերահսկողության իրավասություն ունեցող սուբյեկտների կազմը և վերահսկողության շրջանակներում պատասխանատվության միջոցների կիրառման կարգը և պայմանները:
2. «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերությանը վերահսկողություն է իրականացնում իր կողմից կազմակերպված շուկաները կարգավորող իրավական ակտերի խախտումները բացահայտելու և/կամ դրանք կանխարգելելու նպատակով:

Գլուխ 2. Կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացությունները

3. Սույն կանոնակարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝
 - 1) «**Օրենք**». «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.
 - 2) «**Օպերատոր**». «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերություն.
 - 3) «**Շուկա**». օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված կարգով որևէ ֆինանսական գործիքի հրապարակային առևտուր կազմակերպելու նպատակով Օպերատորի կողմից կազմակերպված շուկա.
 - 4) «**Շուկայի մասնակից**». իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող անձ, որը Օպերատորի հետ ունի Շուկայում առևտրին մասնակցության վերաբերյալ գործող պայմանագիր.
 - 5) «**Շուկա ստեղծող**». Շուկայի մասնակից, որն ունի տվյալ դասի արժեթղթերի՝ Օպերատորի կանոններով սահմանված կարգով շնորհված, շուկա ստեղծողի կամ գնանշողի կարգավիճակ.
 - 6) «**Թողարկող**». թողարկող, որի կողմից թողարկված որևէ դասի արժեթուղթը ցուցակված է (թույլատրված է առևտրին) Շուկայում.
 - 7) «**Վերահսկողություն**». վերահսկման գործառույթի իրականացման հետ կապված համալիր միջոցառումների իրականացման գործընթաց, որի արդյունքում հնարավորություն է ընձեռվում վերահսկել Շուկայում Վերահսկվող անձանց գործունեությունը Օպերատորի կանոններով նախատեսված կարգով և սահմաններում.
 - 8) «**Վերահսկվող անձ**». Շուկայի մասնակից և Թողարկող.
 - 9) «**Կարգապահական խախտում**». Վերահսկվող անձանց կողմից Օրենքով, դրանից բխող նորմատիվ իրավական ակտերով և Օպերատորի կանոններով սահմանված պահանջի խախտումով կատարված այնպիսի գործողություն կամ անգործություն, որի համար Օպերատորի կանոններով սահմանված է պատասխանատվություն.
 - 10) «**Դիտորդ խորհուրդ**». Օպերատորի դիտորդ խորհուրդ.
 - 11) «**Տնօրեն**». Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար.
 - 12) «**Կարգապահական հանձնաժողով**». Օպերատորի կազմում և անունից գործող մարմին, որն իրականացնում է կարգապահական խախտման համար հարուցված գործի, Օպերատորի վերահսկողական գործողությունների հետ կապված բողոքների քննությունը, ինչպես նաև իր իրավասությունների շրջանակում կիրառում կարգապահական պատասխանատվության միջոցներ.

- 13) «**Վերահսկող ծառայություն**». Օպերատորի կառուցվածքային ստորաբաժանում, որն իր լիազորությունների շրջանակում Օպերատորի անունից վերահսկում է Շուկան և Վերահսկվող անձանց.
 - 14) «**Հաշվետվական վերահսկողություն**». Օպերատորի կանոններով սահմանված ձևով, կարգով և ժամկետներում Վերահսկվող անձանց կողմից Շուկայում իրենց գործունեության վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների, տեղեկանքների, բացատրագրերի և այլ նման փաստաթղթերի ուսումնասիրման միջոցով իրականացվող վերահսկողություն.
 - 15) «**Մոնիտորինգ**». Շուկայում իրենց գործառույթների իրականացման ընթացքում Վերահսկվող անձանց կողմից Շուկայի համար սահմանված պահանջների պահպանման նկատմամբ ընթացիկ վերահսկողություն.
 - 16) «**Ստուգում**». Շուկայի մասնակցի կամ Թողարկողի գտնվելու վայրում այդ անձի կողմից Շուկայի համար սահմանված պահանջների պահպանումը հիմնավորող փաստաթղթերի և հանգամանքների ուսումնասիրման միջոցով իրականացվող վերահսկողություն.
 - 17) «**Ստուգում իրականացնող խումբ**». Օպերատորի կողմից ստուգում իրականացնելու նպատակով ստեղծվող խումբ.
 - 18) «**Կարգապահական գործ**». սույն կանոնակարգով սահմանված կարգով ներկայացված միջնորդության հիման վրա Կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցված գործ.
 - 19) «**Կարգապահական տույժ**». Կարգապահական խախտման համար Օպերատորի կողմից սահմանված պատասխանատվության միջոց.
 - 20) «**Կարգապահական վարույթ**». սույն կանոնակարգով սահմանված կարգով իրականացվող գործընթաց, որը ներառում է Կարգապահական խախտման արձանագրումը, Կարգապահական տույժի կիրառման վերաբերյալ միջնորդության ներկայացումն ու կանխագելիչ և/կամ պատասխանատվության միջոցի կիրառման կամ կիրառման մերժման մասին որոշման ընդունումը.
 - 21) «**Հայցվոր**». Օպերատորի Վերահսկող ծառայություն, Թողարկող կամ Շուկայի մասնակից, որը սույն կանոնակարգով սահմանված կարգով Կարգապահական հանձնաժողով պահանջ է ներկայացրել:
 - 22) «**Պատասխանող**». անձ, որի դեմ պահանջ է ներկայացվել Կարգապահական հանձնաժողով.
 - 23) «**Վկա**». ցանկացած անձ, ում հայտնի են Կարգապահական գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող տեղեկություններ և հանգամանքներ և ով Կարգապահական հանձնաժողովի կողմից ներգրավվել է Կարգապահական գործի քննության գործընթացում:
4. Սույն կանոնակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված նշանակությունները:

ԲԱԺԻՆ II. ՕՊԵՐԱՏՈՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Գլուխ 3. Օպերատորի կողմից Շուկայի վերահսկողության շրջանակը

5. Իր իրավասությունների շրջանակներում Օպերատորը վերահսկում է հետևյալ անձանց՝
 - 1) կորպորատիվ արժեթղթերի շուկայի մասնակիցներին.
 - 2) պետական արժեթղթերի շուկայի մասնակիցներին.
 - 3) արտարժույթի շուկայի մասնակիցներին.
 - 4) վարկային ռեսուրսների շուկայի մասնակիցներին.

- 5) կորպորատիվ արժեթղթերի շուկայում ցուցակված (առևտրին թույլատրված) արժեթղթերի թողարկողներին:
6. Օպերատորը վերահսկում է հետևյալ ոլորտները՝
 - 1) Շուկայում ֆինանսական գործիքների գնագոյացումը և գործարքների կնքումը՝ ներքին տեղեկատվության օգտագործմամբ, գնային չարաշահմամբ և իրավական ակտերի խախտումով կնքված գործարքները բացահայտելու և կանխարգելելու նպատակով.
 - 2) ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից ներդրողների նկատմամբ վարվելակերպի կանոնների պահպանումը.
 - 3) Օպերատորի կանոններով նախատեսված և կորպորատիվ արժեթղթերի շուկայում շրջանառվող արժեթղթերի թողարկողների կողմից բացահայտման ենթակա տեղեկատվության ժամանակին, ամբողջական և առանց ակնհայտ թերությունների բացահայտումը.
 - 4) Շուկայի բնականոն գործունեության համար նախատեսված այլ պահանջների (այդ թվում՝ Օպերատորի նկատմամբ պարտավորությունների, Օպերատորի հրահանգների և որոշումների) կատարումը:
7. Շուկայի վերահսկման ոլորտում Օպերատորն իրականացնում է հետևյալ գործառույթները՝
 - 1) մոնիտորինգ.
 - 2) հաշվետվական վերահսկողություն.
 - 3) ստուգում.
 - 4) կանխարգելիչ միջոցառումների կիրառում.
 - 5) կարգապահական վարույթի իրականացում.
 - 6) կարգապահական տույժի կիրառում.
 - 7) վերահսկողության ոլորտում Օպերատորի իրավասու մարմինների կողմից կայացված որոշումների բողոքարկումների քննում:

Գլուխ 4. Օպերատորի անունից վերահսկողություն իրականացնող մարմինները

8. Շուկան վերահսկելու գործառույթները Օպերատորն իրականացնում է իր Դիտորդ խորհրդի, Կարգապահական հանձնաժողովի, Վերահսկող ծառայության, իսկ ստուգումների դեպքում՝ ստուգող խմբի միջոցով, որոնց գործունեությունները կարգավորվում են սույն կանոնակարգով և Օպերատորի այլ ներքին իրավական ակտերով:
9. Օպերատորի վերահսկողական գործառույթների կապակցությամբ Դիտորդ խորհրդի կամ Կարգապահական հանձնաժողովի որոշումների կատարման և Շուկայի մոնիտորինգը, ինչպես նաև հաշվետվական վերահսկողությունն իրականացնող հիմնական մարմինը Վերահսկող ծառայությունն է:

Դիտորդ խորհուրդը կամ Կարգապահական հանձնաժողովը կարող են մոնիտորինգ կամ հաշվետվական վերահսկողություն իրականացնել վերահսկողական իրենց իրավասությունները պատշաճ իրականացնելու նպատակով:
10. Օպերատորի անունից ստուգումներն իրականացվում են Վերահսկող ծառայության ղեկավարի որոշմամբ ձևավորված և առնվազն երկու անձից բաղկացած ստուգող խմբի կողմից, որի ղեկավարը, որպես կանոն, Վերահսկող ծառայության ղեկավարն է: Եթե ստուգող խմբի ղեկավարը Վերահսկող ծառայության ղեկավարը չէ, ապա ստուգման արդյունքները ներկայացվում են Վերահսկող ծառայության ղեկավարին:

Ստուգումներ կարող են իրականացվել նաև Կարգապահական հանձնաժողովի նախագահի առաջարկով:
11. Օպերատորի կազմում կարգապահական վարույթ հարուցող մարմինը Վերահսկող ծառայությունն է: Օպերատորի կազմում կամ անունից վերահսկողական գործառույթներ

իրականացնող այլ մարմինները կամ անձինք կարգապահական վարույթի հարուցում կարող են ապահովել միայն Վերահսկող ծառայության միջոցով՝ վերջինիս ներկայացնելով անհրաժեշտ հիմնավորումները, եթե սույն կանոնակարգով այլ բան սահմանված չէ:

12. Օպերատորի կարգապահական պատասխանատվության միջոցները կիրառող հիմնական մարմինը Կարգապահական հանձնաժողովն է:

Որպես կարգապահական տույժ՝ շուկա ստեղծողի կարգավիճակի, Շուկայի մասնակցի կարգավիճակի կամ առևտրին արժեթղթի թույլտվության դադարեցման (ապացուցակման) մասին որոշումն ընդունվում է Դիտորդ խորհրդի կողմից՝ Կարգապահական հանձնաժողովի միջնորդությամբ: Եթե Դիտորդ խորհրդը մերժում է դադարեցման մասին Կարգապահական հանձնաժողովի միջնորդությունը, ապա Վերահսկվող անձի կողմից թույլ տված խախտման համար Կարգապահական հանձնաժողովը՝ իր իրավասությունների շրջանակներում, կիրառում է տվյալ խախտման համար հնարավոր առավելագույն պատասխանատվության միջոցը:

Գլուխ 5. Վերահսկողության գործառույթների առնչությամբ Օպերատորի իրավունքները և պարտականությունները

13. Վերահսկվող անձանց Օպերատորը վերահսկում է օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերով, այլ նորմատիվ իրավական ակտերով և Օպերատորի իրավական ակտերով նախատեսված սահմաններում և կարգով:

14. Օպերատորի անունից վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմինները Վերահսկվող անձի կողմից խախտում թույլ տալու կամ խախտման (այդ թվում՝ շուկայի չարաշահման) հանգեցնող նախադրյալների ստեղծման հանգամանքը հաստատում (անհրաժեշտության դեպքում՝ արձանագրում) են այն օրը (բացառությամբ ստուգման արդյունքում բացահայտված խախտումների), երբ այդ մարմինների մոտ հիմնավոր կարծիք է ձևավորվում այն մասին, որ Վերահսկվող անձի գործողությունները (անգործությունը) հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Շուկայի համար սահմանված պահանջների խախտմանը: Ընդ որում, Վերահսկվող անձի կողմից խախտում թույլ տալու կամ խախտման (այդ թվում՝ շուկայի չարաշահման) հանգեցնող նախադրյալների ստեղծման հանգամանքի առկայությունը փաստելու համար Օպերատորի անունից վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմինները՝ Օպերատորի, ՀՀ կենտրոնական բանկի և/կամ այլ իրավական ակտերով նախատեսված մեթոդաբանությունից և/կամ չափանիշներց բացի, կարող են հիմք ընդունել նաև համանման շուկաների կարգավորման ոլորտում հեղինակություն ունեցող կազմակերպությունների կամ մարմինների կողմից կիրառվող մեթոդաբանությունը, չափանիշները կամ նախադեպային որոշումները, ինչպես նաև սխալ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվության տարածելու առումով կասկած չհարուցող անձանց կողմից բացահայտված տեղեկատվությունը:

Ստուգման արդյունքում բացահայտված խախտումներն արձանագրվում են ստուգման գործընթացն ավարտելուց հետո:

15. Վերահսկողության պարտականությունների պատշաճ կատարման նպատակով Օպերատորի անունից վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմինները՝ իրենց իրավասությունների շրջանակներում, իրավունք ունեն՝

- 1) հաշվետվական վերահսկողություն իրականացնելու նպատակով Վերահսկվող անձանցից պահանջել Օպերատորին ներկայացնել Շուկայում նրանց գործունեությանը (այդ թվում՝ ներքին (ինսայդերական) տեղեկության օգտագործմանը) վերաբերող

բացատրություններ, տեղեկություններ և փաստաթղթեր՝ սահմանելով ներկայացման ժամկետ.

- 2) ստուգել Թողարկողների և Շուկայի մասնակիցների՝ Շուկայում մասնակցելու վերջիններիս իրավունքի հետ կապված փաստաթղթերը և պահանջելու նրանցից տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են վերահսկողության իրականացման համար.
 - 3) արձակել Վերահսկվող անձանց կողմից պարտադիր կատարման ենթակա ցուցումներ, որոնք ուղղված են նրանց մոտ հայտնաբերված՝ Շուկայի համար սահմանված պահանջների և Օպերատորի որոշումների պահանջների խախտման վերացմանը (ուղղմանը) կամ նպատակաուղղված են Շուկայի համար սահմանված պահանջների խախտման կանխարգելմանը.
 - 4) հնարավոր խախտման (այդ թվում՝ շուկայի չարաշահման) կանխարգելման նպատակով կանխարգելիչ բնույթ կրող կասեցումներ կիրառել Շուկայի մասնակցի կամ Հաշվետու թողարկողի արժեթղթերի նկատմամբ.
 - 5) Օպերատորի կանոններով սահմանված կարգով և չափերով տույժեր կիրառել Թողարկողների և Շուկայի մասնակիցների նկատմամբ.
 - 6) պատճենահանել կամ այլ կերպ կրկնօրինակել Վերահսկվող անձանցից ստացված տեղեկությունները և փաստաթղթերը:
16. Վերահսկող ծառայությունը կարող է ձեռնպահ մնալ Վերահսկվող անձանց նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումից, եթե՝
- 1) խախտումը պարբերական բնույթ չի կրում, խախտման տևողությունը չի գերազանցում 30 (երեսուն) վայրկյանը և տվյալ իրավիճակում բավարար հիմքեր չկան փաստելու, որ տվյալ խախտումը հանգեցրել է խախտում թույլ տված անձի կամ նրա հետ փոխկապակցված անձի համար ավելի բարենպաստ պայմաններով գործարքների կնքմանը կամ տվյալ խախտման հետևանքով Շուկայում գործող այլ անձինք կամ Օպերատորն վնաս են կրել, կամ
 - 2) Վերահսկվող անձանց կողմից թույլ տրված խախտումն ամիջականորեն չի առնչվում Օպերատորի առևտրային համակարգում իրականացվող գործառույթներին, դրա մասին արդեն հայտնի է ՀՀ կենտրոնական բանկին կամ կարող էր հայտնի դառնալ խախտում թույլ տված անձանց կողմից իրավական ակտերով սահմանված պարտավորությունների կատարման արդյունքում, և տվյալ իրավիճակում այդ խախտումը արդեն չի հանգեցնում Օպերատորի կանոններով նախատեսված՝ կասեցման կամ դադարեցման գործընթացներից որևէ մեկի կիրառմանը, կամ
 - 3) Օպերատորի կողմից Վերահսկվող անձանց կողմից թույլ տված խախտման բացահայտման կամ այդ խախտման մասին տեղեկանալու ժամանակահատվածը՝ խախտում թույլ տալու օրվանից հաշված, գերազանցում է տասնութ ամիսը, կամ
 - 4) Վերահսկվող անձանց կողմից թույլ տրված տվյալ խախտման համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից արդեն կարգապահական վարույթ է հարուցվել կամ տույժ է կիրառվել:
17. Կարգապահական հանձնաժողովը, քննելով խախտման հանգամանքները, կարող է տվյալ խախտման համար Օպերատորի իրավական ակտերով նախատեսված տույժերից ավելի մեղմ տույժ կիրառել:
18. Վերահսկվող անձի կողմից հնարավոր խախտումը կանխարգելելու նպատակով Վերահսկող ծառայությունը, իսկ կարգապահական գործի քննության արդյունքում՝ նաև Կարգապահական հանձնաժողովը, իրավունք ունեն տվյալ Վերահսկվող անձի հնարավոր խախտման կանխարգելմանն ուղղված և նրա համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներ արձակել: Վերահսկվող անձի կողմից հնարավոր խախտումը կանխարգելելու նպատակով Կարգապահական հանձնաժողովն իրավունք ունի նաև ժամանակավոր

սահմանափակել որոշակի արժեթղթերի շրջանառությունը կամ Վերահսկվող անձի գործողությունները Շուկայում:

19. Անկախ սույն կանոնակարգով նախատեսված այլ կարգապահական տույժերի կիրառումից, դրանց կիրառման համար նախատեսված ընթացակարգերի կամ վերահսկման շրջանակներում կիրառվող այլ ընթացակարգերի իրականացումից, շուկայի չարաշահման դեպքերի առկայության չափանիշները, շուկայի չարաշահման դեպքերի արձանագրման համար հիմք հանդիսացող հանգամանքները և/կամ ազդակները բավարար հիմք են շուկայում տվյալ Շուկայի մասնակցի գործունեությունը կամ տվյալ Հաշվետու թողարկողի մեկ կամ բոլոր արժեթղթերի առևտրին թույլտվությունը (ցուցակումը) կասեցնելու համար:
20. Վերահսկվող անձի կողմից խախտում թույլ տալու փաստերի կամ հանգամանքների ուսումնասիրման ընթացքում Օպերատորի անունից վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմինների անդամները կամ աշխատակիցները իրավունք ունեն տեղեկություններ ստանալ դրանց հաղորդման կամ փոխանցման համար նախատեսված ցանկացած միջոցներով:
21. Օպերատորի անունից վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմինների անդամները կամ աշխատակիցներն իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս պարտավոր են գործել բարեխղճորեն և առանց կողմնակալության: Որևէ հարցի կապակցությամբ անձնական շահագրգռվածություն ունեցող անձը պարտավոր է տեղեկացնել տվյալ հարցի առնչությամբ Օպերատորի վերահսկողական գործառույթներում ներգրավված այլ անձանց իր շահագրգռվածության փաստի և բնույթի մասին, և ձեռնպահ մնալ շահերի բախում առաջացնող գործողություններից:
22. Օպերատորի անունից վերահսկողական գործառույթներ իրականացնող մարմինների անդամները կամ աշխատակիցները պարտավոր են չհրապարակել կամ այլ կերպ չտարածել կամ անձնական շահադիտական նպատակով չօգտագործել իրենց պարտականությունների կատարման ընթացքում ստացած Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ Օպերատորի իրավական ակտերով սահմանված ծառայողական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկատվությունը:

Գլուխ 6. Մոնիտորինգ և հաշվետվական վերահսկողություն

23. Սույն գլխով մոնիտորինգին վերաբերող դրույթները կիրառելի են նաև հաշվետվական վերահսկողության համար, եթե սույն կանոնակարգով այլ բան սահմանված չէ:
24. Շուկայում մոնիտորինգն իրականացվում է Վերահսկող ծառայության կողմից՝ սույն կանոնակարգով սահմանված իրավասությունների ու պարտականությունների շրջանակներում:
25. Շուկայում մոնիտորինգն իրականացնելիս Վերահսկող ծառայությունն իրավունք ունի ծանոթանալու Շուկային վերաբերող և Օպերատորին ներկայացված ցանկացած փաստաթղթին կամ տեղեկատվությանը:
26. Վերահսկվող անձի կողմից խախտում թույլ տալու կասկածի դեպքում Վերահսկող ծառայությունն ուսումնասիրում է հայտնի բոլոր փաստերը և հանգամանքները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նախաձեռնում հաշվետվական վերահսկողություն:
27. Վերահսկող ծառայությունը՝ Վերահսկվող անձի կողմից խախտում թույլ տալու հանգամանքը հաստատելուց հետո, 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվի առնելով սույն կանոնակարգի 16-րդ կետի դրույթները.
 - 1) հարուցում է կարգապահական վարույթ՝ խախտման փաստի կապակցությամբ կարգապահական տույժ կիրառելու միջնորդությամբ դիմելով Կարգապահական

հանձնաժողովին և խախտման մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին, կամ

- 2) խախտման մասին տեղեկացնում է Կարգապահական հանձնաժողովին, խախտում թույլ տված անձին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 16-րդ կետի դրույթների կիրառման հիմնավորումը:
28. Կարգապահական հանձնաժողովն իրավասու է մասնակի կամ ամբողջությամբ անհամաձայնություն ցուցաբերել Վերահսկող ծառայության՝ սույն կանոնակարգի 27-րդ կետի համաձայն ձևավորված դիրքորոշմանը:
Վերահսկող ծառայության կողմից պարզեցված ընթացակարգով պատասխանատվության միջոցի կիրառման մասին միջնորդության կամ կարգապահական վարույթի հարուցումից ձեռնպահ մնալու վերաբերյալ անհամաձայնություն ունենալու դեպքերում Կարգապահական հանձնաժողովը՝ Վերահսկող ծառայության դիրքորոշման մասին տեղեկանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, պետք է մերժի տվյալ գործով պարզեցված ընթացակարգով պատասխանատվության միջոցի կիրառման մասին Վերահսկող ծառայության միջնորդությունը և/կամ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ գրավոր ցուցում հղի Վերահսկող ծառայությանը՝ հիմնավորելով Վերահսկող ծառայության միջնորդության մերժումը և/կամ կարգապահական վարույթ հարուցելու անհրաժեշտությունը:
29. Վերահսկող ծառայությունը՝ Վերահսկվող անձի կողմից թույլ տրված խախտման հիմքով վարույթ հարուցելիս, կազմում է խախտման վերաբերյալ արձանագրություն, իսկ սույն կանոնակարգի 16-րդ կետի համաձայն ձեռնպահ մնալու դեպքում՝ փաստագրում է խախտումը:
30. Վերահսկվող անձի կողմից խախտում թույլ տալու կամ դրա ի հայտ գալու համար բավարար նախադրյալների առկայության պարագայում, թույլ տրված խախտումը կամ դրա հետևանքները վերացնելու կամ հնարավոր խախտումը կանխարգելելու նպատակով, Կարգապահական հանձնաժողովը և/կամ Վերահսկող ծառայությունն իրավասու են Վերահսկվող անձից պահանջել ձեռնարկել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություններից:
Վերահսկվող անձի կողմից էական խախտում (այդ թվում՝ ակնհայտ շուկայի չարաշահում) թույլ տալու համար բավարար նախադրյալների առկայության պարագայում Կարգապահական հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի, կարող է նաև պարզեցված ընթացակարգով տվյալ Շուկայի մասնակցի գործունեությունը շուկայում կամ տվյալ Հաշվետու թողարկողի մեկ կամ բոլոր արժեթղթերի առևտրին թույլտվությունը (ցուցակում) կասեցնելու մասին որոշում ընդունել:

Գլուխ 7. Ստուգում

31. Օպերատորի կողմից ստուգում կարող է իրականացվել միայն Շուկան կարգավորող նորմերի պահպանումը ստուգելու նպատակով և բացառիկ դեպքերում, երբ մոնիտորինգի կամ հաշվետվական վերահսկողության իրականացումը տվյալ իրավիճակում բավարար չէ:
32. Շուկայի մասնակցի կամ Թողարկողի ստուգման համար հիմք է հանդիսանում Վերահսկող ծառայության ղեկավարի որոշումը, որում նշվում են.
 - 1) ստուգվող անձի կամ ստորաբաժանման անվանումը և գտնվելու վայրը,
 - 2) ստուգման նպատակը,
 - 3) ստուգում իրականացնող խմբի կազմը,
 - 4) ստուգման իրականացման ժամանակաշրջանը՝ նշելով ստուգման անցկացման սկիզբը և ավարտը:

33. Ստուգում իրականացնող խմբում չընդգրկված անձինք չեն կարող մասնակցել ստուգմանը: Ստուգում իրականացնող խմբում ընդգրկված ծառայողական պարտականությունները կատարելու անհնարինության պատճառով անձի փոխարինումը մեկ այլ անձով կարող է իրականացվել միայն ստուգման համար հիմք հանդիսացող որոշման համապատասխան փոփոխությամբ:
34. Ստուգում իրականացնող խմբի ղեկավարը ստուգումը սկսելուց առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օր առաջ պարտավոր է համապատասխան որոշման երկու օրինակ պատճեններ տրամադրել ստուգվող անձի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, որը պարտավոր է ստորագրել մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է ստուգում իրականացնող խմբին:
35. Ստուգում իրականացնող խումբն ստուգում իրականացնելու մասին որոշմամբ սահմանված նպատակի շրջանակներից դուրս գալու իրավունք չունի:
36. Ստուգման ընթացքում ստուգման նպատակները կարող են փոփոխվել Վերահսկող ծառայության ղեկավարի որոշմամբ՝ միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Ստուգման նպատակի փոփոխման դեպքում ստուգում իրականացնող խումբը պարտավոր է դրա մասին տեղեկացնել ստուգվող անձի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին՝ նրան ներկայացնելով համապատասխան որոշումը:
37. Ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 (տասնհինգ) աշխատանքային օր, ընդ որում, ստուգման առաջին օր է համարվում ստուգումը փաստացի սկսելու օրը: Ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգում իրականացնելու մասին որոշման մեջ նշված ժամկետը:
38. Անհրաժեշտության դեպքում Վերահսկող ծառայության ղեկավարի որոշմամբ ստուգման իրականացման ժամկետը կարող է երկարաձգվել ոչ ավել, քան 15 (տասնհինգ) աշխատանքային օր: Դրա մասին պետք է տեղեկացվի ստուգվող անձի ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:
39. Ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու կամ ստուգման իրականացումն անհնարին դարձնող որևէ հանգամանքի առկայության դեպքում Վերահսկող ծառայության ղեկավարի որոշմամբ ստուգման ընթացքը կասեցվում է՝ մինչև կասեցման հիմքի վերացումը: Ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 (երեսուն) աշխատանքային օրը:
40. Ստուգման արդյունքում Վերահսկվող անձի կողմից թույլ տրված խախտումները փաստվում են արձանագրությամբ՝ երկու օրինակից: Եթե ստուգում իրականացնող խմբի կողմից ստուգման ընթացքում չեն հայտնաբերվում Շուկայի համար սահմանված պահանջների խախտումներ, ապա ստուգման արդյունքում կազմվում է տեղեկանք:
41. Այն դեպքում, երբ Վերահսկող ծառայության ղեկավարը (նրան փոխարինող անձը) չի հանդիսանում ստուգում իրականացնող խմբի ղեկավարը, սակայն ստուգման ավարտի դրությամբ իրականացնում է իր պարտականությունները, ստուգում իրականացնող խումբը՝ նախքան ստուգման արդյունքների արձանագրումը, դրանք քննարկում է Վերահսկող ծառայության ղեկավարի (նրան փոխարինող անձի) հետ:
42. Ստուգման տեղեկանքում պետք է նշվի.
 - 1) տեղեկանքը կազմելու ամսաթիվն ու տեղը,
 - 2) ստուգում իրականացնող խմբի անդամների և ստուգվող անձի անվանումը,
 - 3) ստուգման նպատակը, ժամկետը և արդյունքները,
 - 4) ստուգում իրականացնող խմբի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:
43. Ստուգման արձանագրության մեջ պետք է նշվի.

- 1) արձանագրությունը կազմելու ամսաթիվն ու տեղը,
 - 2) ստուգում իրականացող խմբի անդամների և ստուգվող անձի անվանումը,
 - 3) ստուգման նպատակը և ժամկետը,
 - 4) ստուգման ընթացքում ուսումնասիրված փաստաթղթերը,
 - 5) ստուգման արդյունքները՝ նշելով արձանագրված խախտումները, Շուկան կարգավորող իրավական ակտերի այն դրույթները, որոնց պահանջները չեն պահպանվել (թերի են կատարվել), խախտումների թույլ տրման պատճառները (առկայության դեպքում), խախտման կատարման ժամանակը (շարունակական խախտումների դեպքում՝ խախտման կատարման սկիզբը),
 - 6) հայտնաբերված խախտումների կարգավիճակի մասին, մասնավորապես, եթե դրանք վերացվել են՝ նշելով վերացման ամսաթիվը, կամ դրանք վերացնելու նպատակով ձեռնարկված գործողությունները (առկայության դեպքում),
 - 7) ստուգում իրականացնող խմբի կողմից կարևորվող այլ տեղեկություններ:
44. Ստուգման արձանագրությունը կամ տեղեկանքը ստորագրում են ստուգում իրականացնող խմբի անդամները և ստուգվող անձի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Եթե որևէ հիմնավոր պատճառով, ստուգման ընթացքում, անհնար է դարձել ստուգում իրականացնող խմբի որևէ անդամի մասնակցությունը ստուգմանը և նա փոխարինվել է, կամ հնարավոր չի եղել այդ անդամին փոխարինել, սակայն ստուգումը շարունակվել է այդ անդամի բացակայությամբ, ապա ստուգման արձանագրությունը կամ տեղեկանքը ստորագրում են ստուգում իրականացնող խմբի այն անդամները, որոնք կազմել են այդ արձանագրությունը կամ տեղեկանքը:
 45. Ստուգում իրականացնող խումբը ստուգումն ավարտելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում պետք է կազմված տեղեկանքի կամ արձանագրության երկու օրինակ ներկայացնի ստուգվող անձի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Ստուգվող անձի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը պարտավոր է տեղեկանքը կամ արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստուգում իրականացնող խմբին վերադարձնել տեղեկանքի կամ արձանագրության ստորագրված օրինակը կամ չստորագրված արձանագրության (տեղեկանքի) մեկ օրինակը՝ այն ստորագրելուց հրաժարվելու պատճառաբանությամբ: Սահմանված ժամկետում ստուգում իրականացնող խմբին արձանագրության (տեղեկանքի) օրինակի չվերադարձնելը համարվում է արձանագրությունը (տեղեկանքը) ստորագրելուց հրաժարում:
 46. Ստուգման արձանագրության (տեղեկանքի) ստորագրման ժամանակ տարածայնությունների առկայության դեպքում կողմերի կարծիքներն արձանագրվում են արձանագրության (տեղեկանքի) մեջ: Արձանագրությունը (տեղեկանքը) ստորագրելուց հրաժարվելու դեպքում դրա մասին արձանագրության (տեղեկանքի) մեջ կատարվում է համապատասխան գրառում:
 47. Ստուգման արձանագրության (տեղեկանքի) ստորագրելուն կամ այդ արձանագրության ստորագրելու համար հատկացված ժամկետի ավարտին հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում ստուգող խմբի ղեկավարը պետք է կազմված տեղեկանքի կամ արձանագրության առնվազն մեկ օրինակը ներկայացնի Վերահսկող ծառայության ղեկավարին (նրան փոխարինող անձին), եթե նա չի հանդիսանում ստուգող խմբի ղեկավարը:
 48. Ստուգման արձանագրության (տեղեկանքի) ստորագրելուն կամ այդ արձանագրության ստորագրելու համար հատկացված ժամկետի ավարտին հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, Վերահսկող ծառայության ղեկավարը (Վերահսկող ծառայության ղեկավարի (նրան փոխարինող անձի) բացակայության դեպքում՝ ստուգող

խմբի ղեկավարը), կախված խախտումների բնույթից, կիրառում է սույն կանոնակարգի 27-րդ կետի 1) և 2) ենթակետերով նախատեսված ընթացակարգերից մեկը կամ դրանց համադրությունը՝ Կարգապահական հանձնաժողովին ներկայացնելով նաև ստուգման արձանագրության (տեղեկանքի) պատճենը:

49. Ստուգման արդյունքների վերաբերյալ կիրառելի են սույն կանոնակարգի 28. և 30.-րդ կետերի դրույթները:

Գլուխ 8. Ստուգում իրականացնող խումբը

50. Ստուգում իրականացնելու նպատակով Վերահսկող ծառայության ղեկավարի որոշմամբ ստեղծվում է ստուգում իրականացնող խումբ, որը պետք է բաղկացած լինի առնվազն երկու անդամներից, այդ թվում նաև՝ ստուգում իրականացնող խմբի ղեկավարից:
- Ստուգում իրականացնող խմբի կազմում, Վերահսկող ծառայության աշխատակիցներից բացի, կարող են ընդգրկվել նաև Օպերատորի այլ աշխատակիցներ և(կամ) փորձագետներ:
- Ստուգում իրականացնող խմբի կազմում ներգրավվելու և ստուգման գործընթացին մասնակցելու՝ Օպերատորի այլ աշխատակիցների և(կամ) փորձագետների անհրաժեշտության մասին Վերահսկող ծառայության ղեկավարի դիմումի հիման վրա Տնօրենն ողջամիտ ժամկետներում ձեռնարկում է անհրաժեշտ և բավարար գործողություններ Օպերատորի այլ աշխատակիցների և(կամ) փորձագետների՝ ստուգման գործընթացին մասնակցությունն ապահովելու համար:
51. Եթե որևէ հիմնավոր պատճառով, ստուգման ընթացքում, անհնար է դառնում ստուգում իրականացնող խմբի որևէ անդամի մասնակցությունը ստուգմանը, ինչպես նաև անհնար է դառնում այդ անդամի փոխարինումը, որի պատճառով ստուգում իրականացնող խմբի քանակական կազմը նվազում է երկուսից կամ նվազում է ստուգուման արդյունավետությունը, ապա՝ ելնելով ստուգման արդյունավետությունից և դրա շարունակման նպատակահարմարությունից, Վերահսկող ծառայության ղեկավարը կարող է որոշում կայացնել.
- 1) ստուգումը մեկ անձով շարունակելու,
 - 2) մինչև ստուգում իրականացնող խմբի համալրումը՝ սակայն առավելագույնը 15 աշխատանքային օրով, ստուգումը կասեցնելու, կամ
 - 3) ստուգումը դադարեցնելու վերաբերյալ:
- Ստուգումը դադարեցնելու վերաբերյալ որոշման կայացման դեպքում, որոշման ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, կազմվում է տեղեկանք՝ իրականացված ստուգման աշխատանքների վերաբերյալ:
52. Որպես կանոն, ստուգում իրականացնող խմբի ղեկավարը Վերահսկող ծառայության ղեկավարն է (նրան փոխարինող անձը): Առանձնահատուկ դեպքերում, Վերահսկող ծառայության ղեկավարի (նրան փոխարինող անձի) որոշմամբ ստուգում իրականացնող խմբի ղեկավար կարող է նշանակվել Օպերատորի այլ աշխատակից:
53. Ստուգում իրականացնող խմբի ղեկավարը ստուգումն իրականացնելու ընթացքում ղեկավարում է ստուգման ընթացքը, մասնավորապես՝ նախատեսվելիք ստուգման աշխատանքները բաժանում է ստուգում իրականացնող խմբի անդամների միջև, սահմանում աշխատանքների իրականացման կարգը, հսկում հանձնարարված խնդիրների կատարման ընթացքը, նյութերի ձևակերպման մասին տալիս կարգադրություններ, վերաբաշխում պարտավորությունները, ներկայացնում առաջարկություններ՝ ստուգման ժամկետի երկարացնելու, ստուգման նպատակի փոփոխության, ստուգման կասեցման վերաբերյալ:
54. Ստուգում իրականացնող խումբը ստուգում իրականացնելիս իրավունք ունի.

- 1) ստուգվող անձի ներկայացուցչի ուղղեկցությամբ անարգել մուտք գործել համապատասխան տարածք,
 - 2) պահանջել փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, որոնք անմիջապես առնչվում են իրենց իրավասության շրջանակներում իրականացվող ստուգման նպատակներին,
 - 3) վերցնել փաստաթղթերի պատճեններ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին: Ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր ժամանակավորապես վերցնելու դեպքում այդ մասին կազմվում է արձանագրություն, որում նշվում է դրանց վերադարձման ժամկետը, և որի 1 (մեկ) օրինակը հանձնվում է ստուգվող անձի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին: Ստուգում իրականացնող խմբի ղեկավարը պատասխանատվություն է կրում ժամանակավորապես վերցրած փաստաթղթերի որակական և քանակական ամբողջականության պահպանման ու սահմանված ժամկետում վերադարձման համար,
 - 4) ստուգվող անձի ղեկավարությանը կամ աշխատակիցներին իր իրավասության շրջանակներում ներկայացնել այլ պահանջներ, եթե դրանք բխում են ստուգման անհրաժեշտությունից և նպատակներից:
55. Ստուգում իրականացնող խումբն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է.
- 1) պահպանել Օպերատորի կանոններով սահմանված պահանջները,
 - 2) պահպանել ստուգվող անձի իրավունքները,
 - 3) չխոչընդոտել ստուգվող անձի բնականոն աշխատանքին,
 - 4) իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնել ստուգվող անձի պաշտոնատար անձանց,
 - 5) ստուգման ընթացքում գրավոր պատասխանել ստուգվող անձի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի՝ ստուգման հետ առնչվող ցանկացած գրավոր հարցմանը:

Գլուխ 9. Ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները

56. Ստուգվող անձինք իրավունք ունեն.
- 1) արգելել ստուգումը (ստուգում իրականացնող խմբին փաստաթղթեր տրամադրելը)՝ այդ մասին նույն օրը գրավոր ծանուցելով Օպերատորին և Կենտրոնական բանկին, եթե ստուգում իրականացնող անձինք խախտել են սույն կանոնակարգի կամ Օպերատորի այլ կանոնների որևէ դրույթի պահանջը,
 - 2) ծանոթանալ ստուգման արձանագրությանը կամ տեղեկանքին,
 - 3) ներկայացնել բացատրություններ, պարզաբանումներ, բողոքարկել ստուգում իրականացնող խմբի գործողությունները,
 - 4) իրենց շահերի պաշտպանության նպատակով՝ ստուգման ցանկացած փուլում ստուգմանը մասնակից դարձնել մասնագետների, փորձագետների, աուդիտորների, փաստաբանների:
57. Ստուգվող անձը պարտավոր է.
- 1) չխոչընդոտել ստուգման ընթացքը, կատարել ստուգում իրականացնող խմբի անդամների օրինական պահանջները,
 - 2) ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, տվյալները և այլ տեղեկություններ,
 - 3) անհրաժեշտ պայմաններ ստեղծել ստուգում իրականացնող խմբի գործունեության համար:

Գլուխ 10. Վերահսկողության գործառույթների առնչությամբ Օպերատորի կողմից կարգապահական պատասխանատվության կամ կանխարգելիչ միջոցների կիրառումը և դրանց բողոքարկումը

58. Շուկայի մասնակցի կամ Թողարկողի կողմից Օպերատորի կանոններով կամ Օպերատորի հետ կնքված պայմանագրով սահմանված պահանջների չկատարումը, Օպերատորի կողմից սահմանված տուգանքների չվճարումը, Օպերատորի վերահսկողական գործառույթների իրականացմանը խոչընդոտելը (Օպերատորի կողմից պահանջված տեղեկատվության կամ փաստաթղթի չտրամադրելը, Օպերատորի կողմից անցկացվող ստուգմանը խոչընդոտելը) հիմք են Օպերատորի կողմից կարգապահական (այդ թվում՝ լրացուցիչ կամ ավելի խիստ) պատասխանատվության միջոցների կիրառման համար:
59. Օպերատորի կողմից կարգապահական պատասխանատվության կամ կանխարգելիչ միջոցների կիրառման գործառույթները կարգավորվում են սույն կանոնակարգով և Օպերատորի այլ իրավական ակտերով:
60. Պարզեցված ընթացակարգով նախատեսված կարգապահական տույժի նշանակման օրվանից մեկ ամսվա ընթացքում նույն կարգապահական խախտումը կատարելը, կասեցման հիմքերի չվերացումը կամ տրված հանձնարարականի (կարգադրության) չկատարումը, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում Շուկայի մասնակցի կամ Թողարկողի կողմից 5 (հինգ) այնպիսի խախտում կատարելը, որոնց համար պարզեցված ընթացակարգով կիրառելի են (կիրառվել են) կարգապահական պատասխանատվության միջոցները, հիմք է Շուկայի մասնակցի համար՝ Օպերատորի կանոններով նախատեսված անդամության (կամ շուկային մասնակցության) իսկ Թողարկողի համար՝ արժեթղթերի առևտրին թույլտվության դադերացման (ապացուցակման) համար:
61. Շուկայի մասնակցի կամ Թողարկողի կողմից թույլ տրված այն խախտման գործը, որի համար հնարավոր է պարզեցված ընթացակարգով կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը, Օպերատորի նախաձեռնությամբ կարող է դառնալ նաև Կարգապահական հանձնաժողովի քննության առարկա, առավել ևս այն դեպքում, եթե տվյալ իրավիճակում այդ խախտումը արդեն կարող է հանգեցնել խախտում թույլ տված անձի նկատմամբ Օպերատորի կանոններով նախատեսված առավել խիստ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառմանը:
62. Երկու կամ ավելի կարգապահական խախտում կատարելու դեպքում կարգապահական պատասխանատվության միջոցը նշանակվում է յուրաքանչյուր կարգապահական խախտման համար առանձին, բացառությամբ երբ՝
- 1) միևնույն ոչ դիտավորյալ արարքը (վարքագիծը) հանգեցրել է Օպերատորի կանոնների մի քանի տեսակի խախտումների, որի դեպքում կարգապահական տույժը կիրառվում է միայն այն կարգապահական խախտման համար, որի համար նախատեսված կարգապահական տույժը տվյալ իրավիճակում առավել խիստ է.
 - 2) միևնույն արարքը (վարքագիծը) շարունակաբար կամ պարբերաբար հանգեցրել է Օպերատորի կանոնների միևնույն խախտմանը, որի դեպքում կիրառվում է տվյալ խախտման համար նախատեսված կարգապահական տույժի խստագույն հնարավոր չափը.
 - 3) միևնույն շարունակաբար կամ պարբերաբար կրկնված արարքը (վարքագիծը) հանգեցրել է Օպերատորի կանոնների մի քանի խախտումների, որի դեպքում կիրառվում են սույն կետի 1) և 2) ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը:
63. Շուկայի մասնակցի կամ Թողարկողի կազմում կամ անունից գործող անձի կողմից կարգապահական խախտում թույլ տալու դեպքում պատասխանատվությունը կրում է, համապատասխանաբար, Շուկայի մասնակիցը կամ Թողարկողը:

64. Վերահսկողության գործառույթների առնչությամբ Վերահսկող ծառայության կամ Կարգապահական հանձնաժողովի որոշումները և/կամ գործողությունները կարող են բողոքարկվել Կարգապահական հանձնաժողով՝ որոշման ստացման օրվանից 10 օրվա ընթացքում: Կարգապահական հանձնաժողովը կարող է վերացնել կամ փոփոխել Օպերատորի վերահսկողական գործառույթներին առնչվող իր կամ Վերահսկող ծառայության որոշումները:
65. Կարգապահական հանձնաժողով կարող է վերանայել իր որոշումը նոր ի հայտ եկած այնպիսի հիմնավոր հանգամանքների հիմքով, որոնց առկայության դեպքում Կարգապահական հանձնաժողովի որոշումը կարող էր այլ լինել:
66. Կարգապահական հանձնաժողովը կարող է մերժել Վերահսկողության գործառույթների առնչությամբ գործողությունները կամ որոշումները վերանայման պահանջը, եթե Կարգապահական հանձնաժողովի համոզմամբ այդ պահանջը հիմնավորված չէ, նմանատիպ վերանայման պահանջ կամ բողոք նախկինում արդեն քննվել է և նմանատիպ դեպքերի համար առակա է Կարգապահական հանձնաժողովի բացասական դիրքորոշումը կամ եթե վերանայման պահանջ (բողոք) ներկայացրած անձը.
- 1) տվյալ գործի առնչությամբ չի հանդիսանում շահագրգիռ անձ,
 - 2) չի ներկայացրել բավարար ապացույցներ,
 - 3) լրացուցիչ ներկայացված ապացույցները կարող էր ներկայացնել կամ պետք է ներկայացնել բողոքարկման հիմքում ընկած գործի քննության ընթացքում:
67. Վերահսկողության գործառույթների առնչությամբ Օպերատորի իրավասու մարմինների կողմից կայացված որոշումները ուժի մեջ են մտնում Վերահսկվող անձանց կողմից ստացման պահից, եթե որոշմամբ այլ բան նախատեսված չէ: Որոշումները տրամադրվում են Վերահսկվող անձանց ստացման ծանուցումը հավաստող ցանկացած միջոցով:
68. Վերահսկողության գործառույթների առնչությամբ Օպերատորի գործողությունները (այդ թվում՝ դիմում-բողոքի մերժումը) կարող են բողոքարկվել ՀՀ կենտրոնական բանկում և իրավասու այլ մարմիններում:

ԲԱԺԻՆ III. ՎԵՐԱՀՍԿՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ 11. Վերահսկող ծառայության իրավասությունները

69. Իր խնդիրներն իրականացնելու նպատակով Վերահսկող ծառայությունը համագործակցում է Օպերատորի այլ մարմինների և աշխատակիցների, Կենտրոնական բանկի, Շուկայի մասնակիցների, Թողարկողների և Շուկայում իրականացվող գործառույթների հետ առնչվող այլ անձանց հետ:
70. Վերահսկող ծառայությունը իրավունք ունի՝
- 1) մոնիտորինգի, հաշվետվական վերահսկողության և ստուգումների միջոցով իրականացնել Վերահսկվող անձանց կողմից Շուկայի համար սահմանված պահանջների պահպանման վերահսկողություն,
 - 2) Վերահսկվող անձանց կողմից Շուկայի համար սահմանված պահանջների կատարումը պարզելու նպատակով նրանցից պահանջել անհրաժեշտ փաստաթղթերի, բացատրությունների և/կամ տեղեկությունների ներկայացում՝ Վերահսկող ծառայության կողմից նշված ժամկետում,
 - 3) Վերահսկվող անձանց նկատմամբ կարգապահական վարույթ հարուցել կամ՝ հաշվի առնելով սույն կանոնագրքի 16-րդ կետի դրույթները, ձեռնպահ մնալ կարգապահական վարույթ հարուցելուց,

- 4) պարզեցված ընթացակարգով կարգապահական պատասխանատվության կամ կանխարգելիչ միջոցների կիրառման վերաբերյալ միջնորդություն ներկայացնել Կարգապահական հանձնաժողովի նախագահին,
- 5) իր իրավասությունների շրջանակներում, խախտումների ի հայտ գալու բավարար նախադրյալների առկայության դեպքում, կանխարգելիչ միջոցներ կիրառել:

Գլուխ 12. Վերահսկող ծառայության կառուցվածքը և աշխատակազմին ներկայացվող պահանջները

71. Վերահսկող ծառայությունը կազմվում է Վերահսկող ծառայության ղեկավարից և այլ աշխատակցներից, որոնց նշանակում և ազատում է Դիտորդ խորհուրդը՝ իր, Կարգապահական հանձնաժողովի անդամների և/կամ Տնօրենի ներկայացմամբ: Դիտորդ խորհուրդը սահմանում է նաև Վերահսկող ծառայության աշխատակցների քանակական կազմը, աշխատակցների վարձատրության պայմանները և պաշտոնավարման ժամկետները: Վերահսկող ծառայության որևէ պաշտոնի թափուր մնալու, որևէ աշխատակցի կողմից իր պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության՝ 3 (երեք) ամիսը գերազանցող ժամկետի դեպքում կամ Վերահսկող ծառայության աշխատակցին ներկայացվող պահանջներին անհամապատասխանության ի հայտ գալու դեպքում, Դիտորդ խորհուրդը պետք է ողջամիտ ժամկետներում որոշում կայացնի Վերահսկող ծառայության՝ սահմանված կազմի համալրման և/կամ աշխատակիցների պաշտոնավարման նպատակահարմարության վերաբերյալ: Վերահսկող ծառայության աշխատակցների հետ աշխատանքային պայմանագրերը կնքում կամ լուծում է Տնօրենը՝ հիմք ընդունելով Դիտորդ խորհրդի համապատասխան որոշումները: Վերահսկող ծառայությունը հաշվետու է Դիտորդ խորհրդին: Դիտորդ խորհրդին Վերահսկող ծառայության հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը սահմանվում է Դիտորդ խորհրդի որոշմամբ, սակայն ոչ պակաս, քան տարին երկու անգամը:
72. Վերահսկող ծառայության աշխատակից կարող է լինել այն գործունակ ֆիզիկական անձը, որը՝
 - 1) ունի կամ նշանակվելու պահից առավելագույնը 3 (երեք) ամսվա ընթացքում ստանում է համապատասխանաբար՝ Վերահսկող ծառայության ղեկավարի կամ անդամի մասնագիտական որակավորում,
 - 2) չի հանդիսանում Շուկայի մասնակցի կամ Թողարկողի կամ դրանց հետ փոխկապակցված անձանց բաժնետեր (մասնակից), խորհրդի անդամ (այդ թվում՝ նախագահ), տնօրեն կամ գործադիր մարմնի աշխատակից,
 - 3) չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային մարմնի աշխատակից,
 - 4) օրենքով սահմանված կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
 - 5) դատավճռով զրկված չէ ֆինանսական, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից՝ դրա մասին դատավճռում ուղղակի նշված լինելու դեպքում,
 - 6) ճանաչված չէ սնանկ և չունի չմարված (չներված) պարտավորություններ:
73. Վերահսկող ծառայության ղեկավարը.
 - 1) ներկայացնում է Վերահսկող ծառայությունը և արտահայտում է դրա դիրքորոշումը,

- 2) կազմակերպում և ղեկավարում է Վերահսկող ծառայության աշխատանքը,
 - 3) ունի սույն և Օպերատորի այլ ներքին իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:
74. Վերահսկող ծառայության ղեկավարի ժամանակավոր բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման ժամանակավոր անհնարինության դեպքում նրան փոխարինում է Դիտորդ խորհուրդի կողմից նշանակված անձը, իսկ այդպիսին նշանակված չլինելու դեպքում՝ Վերահսկող ծառայության աշխատակիցներից տարիքով ավագը:

ԲԱԺԻՆ IV. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Գլուխ 13. Կարգապահական հանձնաժողովի խնդիրներն ու գործառույթները

- 75. Կարգապահական հանձնաժողովի (սույն բաժնում նաև Հանձնաժողով) խնդիրներն են՝ յուրաքանչյուր Կարգապահական գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, Վերահսկողության ոլորտում Օպերատորի իրավասու մարմինների որոշումների, գործողությունների կամ անգործությունների վերաբերյալ բողոքների քննումը, Կարգապահական գործը Օպերատորի կանոններին համապատասխան լուծելը, ինչպես նաև Կարգապահական խախտումների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելը:
- 76. Հանձնաժողովը կամ Հանձնաժողովի նախագահը, սույն կանոնակարգով սահմանված խնդիրներն իրականացնելու նպատակով, իրենց իրավասությունների շրջանակներում Կարգապահական խախտում թույլ տված Թողարկողի կամ Շուկայի մասնակցի նկատմամբ համապատասխան Կարգապահական տույժի նշանակման մասին որոշում են ընդունում:
- 77. Օպերատորը պարտավոր է Կարգապահական տույժի կիրառման մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորի ինտերնետային կայքում հրապարակել տեղեկատվություն Կարգապահական տույժի կիրառման փաստի, ժամանակի, խախտման բնույթի և խախտումը թույլ տված անձի ինքնության վերաբերյալ, իսկ եթե տույժը բողոքարկվել է Հանձնաժողովում, ՀՀ կենտրոնական բանկում կամ դատարանում, ապա Հանձնաժողովի որոշման, ՀՀ կենտրոնական բանկի որոշման կամ դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում նաև տեղեկություն հրապարակել Հանձնաժողովի որոշման, ՀՀ կենտրոնական բանկի որոշման կամ դատարանի վճռի մասին:

Գլուխ 14. Հանձնաժողովի իրավասությունները

- 78. Հանձնաժողովը իրավունք ունի՝
 - 1) կազմակերպել և անցկացնել նիստեր,
 - 2) Թողարկողի կամ Շուկայի մասնակցի նկատմամբ համապատասխան Կարգապահական տույժի նշանակման, Դիտորդ խորհրդին սույն կանոնակարգով սահմանված միջնորդությունների ներկայացման կամ Կարգապահական գործի կարճման մասին որոշում կայացնել,
 - 3) իր որոշմամբ, Կարգապահական խախտման վերացման կամ կանխարգելման, նպատակով Կարգապահական խախտում թույլ տված կամ խախտում կատարելու նախադրյալներ ստեղծած Թողարկողին կամ Շուկայի մասնակցին հանձնարարական արձակել,
 - 4) Շուկայի օպերատիվ վերահսկողությունն ապահովելու նպատակով, Վերահսկող ծառայության առաջարկի հիմքով, սույն կանոնակարգով սահմանված դեպքերում,

պարզեցված ընթացակարգով (առանց նիստի անցկացման, Հանձնաժողովի նախագահի որոշմամբ, առանց վերահսկվող անձանց նախապես ծանուցման) որոշում ընդունել կարգապահական պատասխանատվության կամ կանխարգելիչ միջոցների կիրառման վերաբերյալ,

- 5) Օպերատորի կանոններով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Շուկայի մասնակցի առևտրի իրավունքը կամ Թողարկողի արժեթղթերի առևտրին թույլտվությունը կասեցնելու կամ այլ հիմքով վարույթ հարուցելու առաջարկ ներկայացնել Օպերատորի Վերահսկող ծառայությանը,
- 6) անհրաժեշտության դեպքում կասեցնել գործի քննության ժամկետները, բայց ոչ ավել քան 60 օրով,
- 7) իրականացնել Օպերատորի կանոններով սահմանված այլ գործառույթներ:

Գլուխ 15. Հանձնաժողովի կազմը և Հանձնաժողովի անդամների լիազորությունների դադարեցման հիմքերը

79. Հանձնաժողովը ստեղծվում է սույն կանոնակարգով սահմանված կարգով և բաղկացած է երեք անդամներից:
80. Հանձնաժողովի նախագահը և Հանձնաժողովի անդամները ընտրվում են Դիտորդ Խորհրդի կողմից գաղտնի քվեարկությամբ երեք տարի պաշտոնավարման ժամկետով:
81. Դիտորդ Խորհուրդը՝ որպես Հանձնաժողովի անդամ, ընտրում է այն անձին, որը ընդգրկված է Տնօրենի կողմից ներկայացվող անդամների թեկնածուների ցանկում:
82. Տնօրենը Դիտորդ Խորհրդին Հանձնաժողովի անդամի թեկնածուի վերաբերյալ առաջարկը ներկայացնում է գրավոր ձևով՝ կցելով սույն գլխի 83. կետի 1) ենթակետով սահմանված տեղեկությունը հավաստիացնող փաստաթղթի պատճենը և 4) ենթակետով նշված գրավոր համաձայնությունը:
83. Հանձնաժողովի անդամի թեկնածուն պետք է լինի այն գործունակ ֆիզիկական անձը, որը՝
 - 1) ունի Օրենքով սահմանված մասնագիտական որակավորում (միայն Կարգապահական հանձնաժողովի նախագահի թեկնածուների համար).
 - 2) չի հանդիսանում Թողարկողի կամ Շուկայի մասնակցի դիտորդ Խորհրդի նախագահ կամ անդամ.
 - 3) չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության պետական մարմնի աշխատակից.
 - 4) գրավոր համաձայնություն է ներկայացրել Հանձնաժողովի անդամի պաշտոնում աշխատելու համար:
84. Հանձնաժողովի անդամ է ընտրվում Հանձնաժողովի անդամի այն թեկնածուն, որը ստացել է Դիտորդ Խորհրդի անդամների ձայների առավելագույն քանակը: Հանձնաժողովի անդամի թեկնածուների ձայների հավասար քանակության ստացման դեպքում, անց է կացվում քվեարկության երկրորդ փուլ, որտեղ քվեարկության ցուցակում ընդգրկվում են այն թեկնածուները, որոնք ստացել են հավասար քանակությամբ ձայներ: Կրկնակի քվեարկության դեպքում ձայների հավասար բաշխման դեպքում որոշիչ է Դիտորդ Խորհրդի նախագահի ձայնը:
85. Հանձնաժողովի նախագահը ընտրվում է Դիտորդ Խորհրդի կողմից՝ Հանձնաժողովի ընտրված անդամների կազմից:
86. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի իրավասությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել Դիտորդ Խորհրդի կողմից, եթե՝
 - 1) Հանձնաժողովի նախագահը կամ անդամը ներկայացրել է դիմում իր լիազորությունների դադարեցման վերաբերյալ.

- 2) Հանձնաժողովի նախագահը գրկվել է Օրենքով նախատեսված մասնագիտական որակավորումից.
 - 3) աշխատունակության կորստի պատճառով Հանձնաժողովի նախագահը կամ անդամը չի կարող իրականացնել սույն կանոնակարգով նախատեսված իր գործառույթները.
 - 4) Հանձնաժողովի նախագահը կամ անդամը երկու անգամ և ավելի անհարգելի բացակայել է Հանձնաժողովի նիստերից:
87. Հանձնաժողովի նախագահի կամ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում Դիտորդ խորհուրդը մեկ ամսյա ժամկետում ընտրում է Հանձնաժողովի նոր նախագահ կամ անդամ:

Գլուխ 16. Հանձնաժողովի նախագահը

88. Հանձնաժողովի նախագահը ղեկավարում և կազմակերպում է Հանձնաժողովի աշխատանքները, սույն կանոնակարգով սահմանված կարգով գումարում է Հանձնաժողովի նիստերը և նախագահում է դրանք, իր իրավասությունների շրջանակներում ընդունում է որոշումներ: Հանձնաժողովի նախագահը՝
- 1) համակարգում և ապահովում է Հանձնաժողովի բնականոն աշխատանքը.
 - 2) նախագահում է Հանձնաժողովի նիստերը, ստորագրում է Հանձնաժողովի որոշումները.
 - 3) ներկայացնում է Հանձնաժողովը այլ մարմիններում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, դատարանում.
 - 4) որոշում է ընդունում Վերահսկող ծառայության կողմից առաջարկված՝ պարզեցված ընթացակարգով կարգապահական պատասխանատվության կամ կանխարգելիչ միջոցների կիրառման վերաբերյալ.
 - 5) կազմակերպում է Հանձնաժողովի նիստերի գումարման և որոշումների ընդունման համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստումը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարումը.
 - 6) կատարում է Հանձնաժողովի իրավասությունների շրջանակներում այլ աշխատանքներ:
89. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը, եթե Հանձնաժողովի որոշմամբ այդ պարտականությունը այլ անդամի վրա դրված չէ:

Գլուխ 17. Հանձնաժողովի անդամը

90. Հանձնաժողովի անդամը աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ պետք է լինի անաչառ, անկողմնակալ և անշահ, նա անկախ է Հանձնաժողովի նիստերում Կարգապահական գործերի քննման ու Կարգապահական տույժի կիրառման մասին որոշումների ընդունման ժամանակ:
91. Հանձնաժողովի անդամը ծայնի իրավունքով պարտավոր է մասնակցել Հանձնաժողովի նիստերին և Հանձնաժողովի կողմից Կարգապահական գործի վերաբերյալ որոշման ընդունման ժամանակ քվեարկել կողմ կամ դեմ: Հանձնաժողովի անդամը իրավունք չունի ձեռնպահ մնալ: Հանձնաժողովի կողմից ընդունված որոշմանը դեմ քվեարկած Հանձնաժողովի անդամը պարտավոր է շարադրել հատուկ կարծիք, որը կցվում է Կարգապահական գործով կայացված որոշմանը:
92. Հանձնաժողովի անդամները, Հանձնաժողովի նիստերում Կարգապահական գործերը քննելիս, ունեն հավասար իրավունքներ և համապատասխան որոշմանը դեմ կամ կողմ

քվեարկելու ժամանակ ղեկավարվում են միայն Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությամբ և Օպերատորի կանոններով:

93. Հանձնաժողովի նիստի ժամանակ քննվող Կարգապահական խախտումների ընթացքում Հայցվորի կամ Պատասխանողի նկատմամբ անձնական շահագրգռվածություն ունեցող Հանձնաժողովի անդամը պարտավոր է տեղեկացնել Հանձնաժողովի մյուս անդամներին իր շահագրգռվածության փաստի ու բնույթի մասին և որից հետո հրաժարվել տվյալ նիստին մասնակցելուց:
94. Այն դեպքում, երբ Հանձնաժողովին Հանձնաժողովի անդամի անձնական շահագրգռվածության մասին հայտնի է դառնում երրորդ անձանցից, ապա նման շահագրգռվածության հաստատման դեպքում, եթե անդամը չի հրաժարվում նիստին մասնակցելուց, Հանձնաժողովը պարտավոր է իր նախաձեռնությամբ դադարեցնել տվյալ անդամի մասնակցությունը նիստին:
95. Սույն գլխի 93. և 94. կետերով սահմանված փաստի առկայության դեպքում, այն արձանագրվում է Հանձնաժողովի որոշման մեջ և Հանձնաժողովի կողմից տվյալ Կարգապահական գործի վերաբերյալ որոշումն ընդունվում է Կարգապահական գործի քննությանը մասնակցող և անձնական շահագրգռվածություն չունեցող Հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
96. Հանձնաժողովի անդամը չի կարող հրապարակել կամ այլ կերպ տարածել, ինչպես նաև անձնական շահադիտական նպատակով օգտագործել իրեն պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծառայողական, առևտրային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկատվությունը:

Գլուխ 18. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը

97. Հանձնաժողովը պետք է ունենա պատասխանատու քարտուղար:
98. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը պետք է ունենա բարձրագույն կրթություն և ունենա Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի պարտականությունները կատարելու համար բավարար փորձ և հմտություններ, որոնք համապատասխանում են Օպերատորի ներքին քաղաքականությամբ սահմանված չափանիշներին: Պատասխանատու քարտուղարը նշանակվում և վերջինիս լիազորությունները դադարում են Դիտորդ խորհրդի հաստատմամբ՝ Հանձնաժողովի ներկայացրած միջնորդության հիման վրա: Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի հետ պայմանագիրը կնքում կամ լուծում է Տնօրենը՝ հիմք ընդունելով Դիտորդ խորհրդի համապատասխան որոշումը:
99. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը իրականացնում է կազմակերպչական աշխատանքներ կապված Հանձնաժողովի գործունեության հետ: Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝
 - 1) սույն կանոնակարգով սահմանված հիմքերի առկայության դեպքում առաջարկություն է ներկայացնում Հանձնաժողովի նախագահին Հանձնաժողովի նիստերի գումարման վերաբերյալ,
 - 2) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ Հանձնաժողովի նիստերի գումարման նպատակով իրականացնում է նախապատրաստական աշխատանքներ,
 - 3) խորհրդատվական ծայնի իրավունքով մասնակցում է Հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև կազմում և ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունը,
 - 4) հաշվառում և պահպանում է Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները, Հանձնաժողով մուտքագրվող և ելքագրվող փաստաթղթերը,
 - 5) Օպերատորի կանոններին համաձայն վարում է Հանձնաժողովի գործավարությունը,

- 6) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ներկայացնում է Հանձնաժողովը պետական և ոչ պետական մարմիններում, այդ թվում՝ դատական ատյաններում,
 - 7) կատարում է Օպերատորի կանոններով սահմանված և Հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ աշխատանքներ:
100. Սույն կանոնակարգի 96. կետով Հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջը տարածվում է նաև Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի վրա:

Գլուխ 19. Հանձնաժողովի տարեկան ծախսերը

101. Դիտորդ խորհուրդը յուրաքանչյուր տարի կազմում է Հանձնաժողովի գործունեության հաջորդ տարվա ծախսերի նախահաշիվը, որը առանձին տողով ներառվում է Օպերատորի տարեկան բյուջեի նախագծում, որն էլ Օպերատորի կանոններով սահմանված կարգով ներկայացվում է Դիտորդ խորհրդի հաստատմանը:
102. Հանձնաժողովի ծախսերի նախահաշիվը պետք է ապահովի Հանձնաժողովի կողմից սույն կանոնակարգով իրեն վերապահված խնդիրների և գործառույթների պատշաճ իրականացումը:

Գլուխ 20. Հանձնաժողովի նիստերը և դրանց գումարման կարգը

103. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, բացառությամբ պարզեցված ընթացակարգի կիրառման դեպքերի, երբ Հանձնաժողովի անունից որոշումները կայացվում են Հանձնաժողովի նախագահի կողմից:
Հանձնաժողովի նիստերը գումարվում են Հանձնաժողովի նախագահի կողմից ըստ անհրաժեշտության, ինչպես նաև Հայցվորի կողմից սույն կանոնակարգի 104. կետով ներկայացված պահանջի հիման վրա:
104. Հայցվորի կողմից պահանջը ներկայացվում է Հանձնաժողովի նախագահին գրավոր դիմումի ձևով, որտեղ նշվում է Պատասխանողի անվանումը, հայցի էությունը (առարկան), նախատեսվող պատասխանատվության միջոցները (Վերահսկող ծառայության կողմից ներկայացվող հայցի դեպքում) և հայցը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը կամ դրանց պատճենները: Սույն կետում նշված դիմումը և դրան կից փաստաթղթերը ներկայացվում են Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին նաև էլեկտրոնային տարբերակով՝ էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կրիչի միջոցով:
105. Հանձնաժողովի նախագահը, սույն կանոնակարգի 104. կետով նշված գրավոր դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը ստանալու դեպքում, անմիջապես Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին Հանձնաժողովի նիստի գումարման նպատակով նախապատրաստական աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնարարական է տալիս՝ նշելով Հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, գումարման ամսաթիվը (օր/ամիս/տարի) և ժամը, ինչպես նաև նիստի օրակագրը: Հանձնաժողովի նախագահը իրավունք ունի հետ վերադարձնել գրավոր դիմումը, ինչպես նաև դրան կից փաստաթղթերը՝ սույն կանոնակարգի 104. կետով սահմանված պահանջներին չբավարարելու դեպքում՝ պահանջելով Հայցվորից ներկայացնել սահմանված պահանջներին համապատասխան դիմում:
106. Հայց ներկայացնելու դեպքում Հանձնաժողովի նիստը գումարվում է Հայցվորի կողմից սույն կանոնակարգով սահմանված կարգով ներկայացված գրավոր դիմումի ստացման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում:
107. Սույն կանոնակարգի 105. կետով սահմանված հանձնարարականի ստացման դեպքում Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը պարտավոր է մինչև նիստի գումարումը,

նիստի գումարումից երեք աշխատանքային օր առաջ ծանուցագիր ուղարկել Հայցվորին, Պատասխանողին և Հանձնաժողովի բոլոր անդամներին:

108. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի կողմից Հանձնաժողովի նիստի գումարման մասին ծանուցագիրը ուղարկվում է Հանձնաժողովի նախագահի կամ պատասխանատու քարտուղարի ստորագրությամբ՝ գրավոր ձևով կամ էլեկտրոնային փոստով և պետք է պարունակի՝
- 1) նիստի անցկացման վայրի, գումարման ամսաթվի (օր/ամիս/տարի) և ժամի, ինչպես նաև նիստի օրակարգի մասին տեղեկություններ, իսկ Կարգապահական գործի արագացված քննության դեպքում նշում այն մասին, որ Հանձնաժողովը նախատեսում է ասանցկացնել Կարգապահական գործի արագացված քննություն.
 - 2) Կարգապահական գործը, որի վերաբերյալ ծանուցվում է սույն կանոնակարգի 107. կետով սահմանված անձը.
 - 3) նշում ծանուցվող անձի մասին.
 - 4) նշում, թե անձը ինչ կարգավիճակով է ծանուցվում կամ կանչվում.
 - 5) նշում չներկայանալու հետևանքների մասին (բացառությամբ Կարգապահական գործի արագացված քննության):
109. Սույն սույն կանոնակարգի 107. կետով սահմանված անձանց ուղարկվող ծանուցագրերին կցվում են Հանձնաժողովի կողմից ստացված դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:
110. Հանձնաժողովի նիստերը դռնբաց են: Եթե անցկացվող Հանձնաժողովի նիստի ժամանակ անհրաժեշտություն է առաջանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ծառայողական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկատվություն, ապա Հանձնաժողովը պարտավոր է անցկացնել դռնփակ նիստ: Դռնփակ նիստի անցկացման դեպքում նիստին կարող են մասնակցել Հայցվորը, Պատասխանողը և/կամ Հանձնաժողովի որոշմամբ նիստում քննարկվող հարցի հետ առնչվող այլ անձինք, եթե անձը, որին վերաբերում է ծառայողական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկատվությունը, գրավոր թույլտվություն է տվել:
111. Հանձնաժողովի կողմից սույն կանոնակարգով սահմանված կարգով ծանուցված Հայցվորի կամ Պատասխանողի չներկայանալը նիստի անցկացնելու խոչընդոտ չէ:

Գլուխ 21. Հանձնաժողովի քվորումը

112. Հանձնաժողովի նիստն իրավագոր է (քվորում ունի), եթե դրան մասնակցում են Հանձնաժողովի անդամներից առնվազն երկուսը, այդ թվում՝ Հանձնաժողովի նախագահը կամ Հանձնաժողովի նիստը նախագահողը: Քվորումի բացակայության դեպքում Հանձնաժողովի նախագահը կամ Հանձնաժողովի նիստը նախագահողը պարտավոր է սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում գումարել Հանձնաժողովի նոր նիստ: Նոր նիստի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:
113. Եթե Հանձնաժողովի նոր նիստի գումարման դեպքում Հանձնաժողովը չի ապահովում քվորումը, ապա Հանձնաժողովը պարտավոր է երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով Դիտորդ խորհուրդ ներկայացնել նախորդ և տվյալ նիստին չներկայացած Հանձնաժողովի նախագահին կամ Հանձնաժողովի անդամին պաշտոնից ազատելու մասին հարցը (բացառությամբ սույն կանոնակարգի 93. և 94. կետերի, ինչպես նաև եթե Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի անդամի բացակայության պատճառը պաշտոնական պարտականությունների կատարումն է, պաշտոնական գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելը կամ հիվանդությունն է և առկա է համապատասխան հիմնավորող փաստաթուղթ): Եթե սույն կետում նշված ժամկետում Հանձնաժողովը չի

դիմում Դիտորդ խորհրդին, ապա սույն կետում նշված դիմումը ներկայացվում է Տնօրենի կողմից՝ այդ մասին տեղեկանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում:

114. Դիտորդ խորհուրդը պարտավոր է սույն կանոնակարգի 113. կետով սահմանված կարգով ներկայացված միջնորդության ստացման պահից տասնաշխատանքային օրվա ընթացքում գումարել Դիտորդ Խորհրդի նիստ՝ օրակարգում ընդգրկելով Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի համապատասխան անդամի պաշտոնական լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու հարցը և Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի համապատասխան անդամի լիազորությունները դադարեցնելու դեպքում հնարավորինս սեղմ ժամկետում ընտրել Հանձնաժողովի նոր անդամ կամ նախագահ:
115. Սույն գլխով նախատեսված քվորումի բացակայության դեպքերում Կարգապահական գործի քննության հետաձգման ժամկետները չեն ներառնվում Կարգապահական գործի քննության ընդհանուր ժամկետների մեջ:

Գլուխ 22. Հանձնաժողովի նիստին մասնակցող անձինք և նրանց իրավունքները

116. Հանձնաժողովի նիստին իրավունք ունեն մասնակցել Հայցվորը և Պատասխանողը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից նիստին հրավիրված այլ անձինք: Եթե Հանձնաժողովի կողմից անց է կացվում դռնբաց նիստ, ապա դրան կարող են մասնակցել նաև երրորդ անձինք:
117. Հանձնաժողովի նիստում Կարգապահական գործը քննելիս Հայցվորը և Պատասխանողը իրավունք ունեն՝
- 1) ծանոթանալ կարգապահական գործի նյութերին,
 - 2) հայտնել բացարկներ,
 - 3) ներկայացնել ապացույցներ և մասնակցել դրանց հետազոտմանը,
 - 4) հարցեր տալ, միջնորդություններ անել, բացատրություններ տալ Հանձնաժողովին,
 - 5) Կարգապահական գործի քննման ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնել իրենց փաստարկները,
 - 6) առարկել գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների, փաստարկների դեմ,
 - 7) սույն կանոնակարգով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Հանձնաժողովի որոշումները,
 - 8) օգտվել սույն կանոնակարգով իրենց վերապահված այլ իրավունքներից:
118. Հանձնաժողովի նիստում Հայցվորը և Պատասխանողը հանդես են գալիս իրենց գործող ղեկավարների կամ նրանց ներկայացուցիչների միջոցով: Հայցվորի և Պատասխանողի գործող ղեկավարը կամ ներկայացուցիչը Հանձնաժողովին են ներկայացնում իրենց պաշտոնական կարգավիճակը կամ ներկայացուցչի լիազորությունները հավաստիացնող փաստաթղթեր (բացառությամբ Վերահսկող ծառայության ղեկավարի): Ներկայացուցչի լիազորությունները հավաստիացնող փաստաթուղթն է՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված և տրված լիազորագիրը:
119. Հանձնաժողովի նիստում Հայցվորի և Պատասխանողի գործող ղեկավարները կամ նրանց ներկայացուցիչները օգտվում են սույն կանոնակարգի 117. կետով սահմանված իրավունքներից:

Գլուխ 23. Հանձնաժողովի նիստին մասնակցող այլ անձինք

120. Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովի նիստին Կարգապահական գործի քննման ժամանակ կարող են մասնակցել նաև այն անձինք, որոնք սույն կանոնակարգի համաձայն հանդես են գալիս որպես Վկա, փորձագետ կամ թարգմանիչ:

121. Հանձնաժողովը իրավունք ունի Վկաներ կանչել Կարգապահական գործին առնչվող որևէ կողմի առաջարկով կամ իր նախաձեռնությամբ:
122. Անձը, ում հանձնարարված է փորձաքննություն կատարել, պարտավոր է օբյեկտիվ եզրակացություն տալ իրեն առաջադրված հարցերի վերաբերյալ:
123. Փորձագետն իրավունք ունի, եթե դա անհրաժեշտ է եզրակացություն տալու համար, ծանոթանալ Կարգապահական գործի նյութերին, մասնակցել Հանձնաժողովի նիստերին, հարցեր տալ, Հանձնաժողովի որոշմամբ ստանալ լրացուցիչ նյութեր: Իրեն տրամադրված նյութերի անբավարարության դեպքում փորձագետը կարող է հրաժարվել եզրակացություն տալուց:
124. Հանձնաժողովը իրավունք ունի թարգմանիչ նշանակել Կարգապահական գործին առնչվող որևէ կողմի առաջարկով, որը և վճարում է թարգմանիչ ծառայությունների համար:

Գլուխ 24. Կարգապահական գործի քննության ժամկետներն ու կարգը

125. Որպես կանոն Հանձնաժողովի կողմից Կարգապահական գործը պետք է քննվի Հանձնաժողովի նիստում և համապատասխան որոշում կայացվի դիմումի ստացման օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն կանոնակարգով կարող են նախատեսվել Կարգապահական գործերի քննման և լուծման ավելի կարճ կամ երկար ժամկետներ:
126. Հանձնաժողովի նիստը սկսվում է Հանձնաժողովի նախագահի նիստի բացման մասին հայտարարությամբ՝ նշելով Հանձնաժողովի կազմը և այն Կարգապահական գործը, որը քննության է առնվելու տվյալ նիստում:
127. Հանձնաժողովի նախագահի կողմից 126. կետով նշված հայտարարությունը տալուց հետո Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը զեկուցում է Հանձնաժողովին՝ Կարգապահական գործին մասնակցող անձանց ներկա լինելու մասին, սահմանված կարգով ծանուցված են արդյոք չներկայացված Հայցվորը և/կամ Պատասխանողը, ինչպես նաև, առկայության դեպքում, տեղեկություններ է հաղորդում նրա կամ նրանց բացակայության պատճառների մասին:
128. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի 127. կետով նշված զեկուցումից հետո Հանձնաժողովի նախագահը պարզում է Հայցվորի և Պատասխանողի ինքնությունը, ստուգում է ներկայացուցիչների լիազորությունները:
129. Հանձնաժողովը, Հանձնաժողովի նախագահի կողմից 128. կետով նշված գործողությունները կատարելուց հետո, հաշվի առնելով Հայցվորի և Պատասխանողի կարծիքները, որոշում է ընդունում ապացույցների հետազոտման հաջորդականության վերաբերյալ: Այնուհետև, Հանձնաժողովի նախագահը, նիստի դահլիճից դուրս հրավիրելով (մինչև նրանց հարցաքննությունը) ներկա Վկաներին, անցնում է Կարգապահական գործն ըստ էության քննելուն՝ համաձայն Հանձնաժողովի կողմից հաստատված՝ ապացույցների հետազոտության հաջորդականության:
130. Հանձնաժողովը, Կարգապահական գործը քննելիս, պարտավոր է գործի ապացույցները հետազոտել անմիջականորեն՝ ծանոթանալ գրավոր ապացույցներին, զննել իրեղեն ապացույցները, լսել Վկաների ցուցմունքները, Հայցվորի և Պատասխանողի բացատրությունները, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փորձագետների եզրակացությունները:
131. Կարգապահական գործի քննման ժամանակ նիստի մասնակիցները Հանձնաժողովին են դիմում և իրենց փաստարկներն ու բացատրությունները տալիս են կանգնած, բացառությամբ Հանձնաժողովի նախագահի կողմից թույլ տրված դեպքերի:
132. Հանձնաժողովի կողմից Կարգապահական գործի քննման ժամանակ Հանձնաժողովի նախագահը իրավունք ունի մերժել այն ամենը, ինչն առնչություն չունի քննվող գործի հետ:

Հանձնաժողովի նիստին մասնակցող և/կամ ներկա գտնվող անձինք պարտավոր են անվերապահորեն կատարել Հանձնաժողովի նախագահի պահանջները՝ կապված Հանձնաժողովի նիստի պատշաճ կարգի և ընթացքի ապահովման հետ:

133. Հանձնաժողովի դռնբաց նիստին ներկա գտնվող անձինք իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություններ և ձայնագրություններ: Հանձնաժողովի նիստերի տեսաձայնագրումը և լուսանկարահանումը, լուսաբանումը զանգվածային լրատվության տպագիր միջոցներով, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում են Հայցվորի և Պատասխանողի համաձայնությամբ՝ Հանձնաժողովի որոշմամբ:
134. Հայցվորի կամ Պատասխանողի կողմից ներկայացված դիմումների ու միջնորդությունների վերաբերյալ Հանձնաժողովը կայացնում է որոշում՝ քննության առնելով նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները:
135. Հանձնաժողովի նիստի ընթացքում բոլոր ապացույցները հետազոտելուց հետո Հանձնաժողովի նախագահը Կարգապահական գործի քննությունը հայտարարում է ավարտված և Հանձնաժողովը հեռանում է որոշում կայացնելու:

Գլուխ 25. Կարգապահական գործի արագացված քննության կարգը

136. Հանձնաժողովը իրավունք ունի կիրառել Կարգապահական գործի արագացված քննություն, եթե՝
 - 1) Կարգապահական գործի էությունից բխում է դրա անհապաղ քննության անհրաժեշտությունը, կամ
 - 2) սույն կանոնակարգով սահմանված կարգով ներկայացված պահանջը ակնհայտ հիմնավոր կամ անհիմն է, կամ
 - 3) տվյալ Կարգապահական գործի քննման հետևանքով բացահայտվող Կարգապահական խախտման վերաբերյալ առկա է ուժի մեջ մտած՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի որոշումը, կամ
 - 4) Կարգապահական գործի վերաբերյալ առկա է Օպերատորի կանոններով սահմանված կարգով ուժի մեջ մտած Հանձնաժողովի համապատասխան որոշումը, կամ
 - 5) Կարգապահական գործում որպես Պատասխանող հանդես եկող Թողարկողի կամ Շուկայի մասնակցի անդամությունը կամ շուկայի մասնակցությունը դադարեցված է, կամ
 - 6) Պատասխանողը գրավոր կերպով ընդունել է թույլ տված խախտման փաստը և/կամ չի առարկել Հանձնաժողովի կողմից արագացված քննություն իրականացնելու առաջարկին, կամ
 - 7) չեն ներկայացվել պահանջը հաստատող ապացույցներ, կամ
 - 8) Հանձնաժողովի որոշմամբ՝ այլ դեպքերում:
137. Հանձնաժողովը իրավունք ունի Կարգապահական գործի արագացված քննություն կիրառել Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կամ Հայցվորի կամ Պատասխանողի միջնորդությամբ: Կարգապահական գործի արագացված քննություն կիրառելու մասին առաջարկը Հանձնաժողովի նախագահը ներկայացնում է Հանձնաժողովի անդամներին և կողմերին գործը քննության նախապատրաստելու ընթացքում:
138. Եթե Կարգապահական գործի արագացված քննության ընթացքում Հանձնաժողովը գալիս է համոզման, որ Կարգապահական գործն արագացված քննություն կիրառելու համար անհրաժեշտ աստիճանի անհետաձգելի չէ կամ չկան բավարար հիմքեր, կամ Պատասխանողը առարկել է արագացված քննություն կիրառելու դեմ, ապա Հանձնաժողովը որոշում է կայացնում Կարգապահական գործի արագացված քննություն կիրառելու որոշումը

վերացնելու մասին: Նման որոշում կայացնելու դեպքում Հանձնաժողովը Կարգապահական գործի քննությունն իրականացնում է սույն կանոնակարգի 24-րդ գլխով սահմանված կարգով:

139. Սույն կանոնակարգի 136. և 137. կետերում նշված հիմքերի առկայության դեպքում Հանձնաժողովը Կարգապահական գործով որոշումը կայացնում է առանց նիստ հրավիրելու, գրավոր ընթացակարգով՝ որոշման նախագիծը Հանձնաժողովի նախագահի կողմից էլեկտրոնային փոստով Հանձնաժողովի անդամներին ուղարկելու և նախագծի վերաբերյալ քվեարկությունը էլեկտրոնային փոստով իրականացնելու միջոցով:

Գլուխ 26. Կարգապահական գործի ապացույցները

140. Կարգապահական գործով ապացույցներ են ՀՀ օրենսդրությամբ չարգելված եղանակներով, ձևերով և միջոցներով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա Հանձնաժողովը պարզում է Կարգապահական գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև որոշման կայացման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացահայտումը: Այդ տեղեկությունները հաստատվում են նաև՝

- 1) գրավոր և իրեղեն ապացույցներով,
- 2) փորձագետների եզրակացություններով,
- 3) Վկաների ցուցմունքներով,
- 4) Կարգապահական գործին մասնակցող անձանց բացատրություններով:

141. ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ ձեռք բերված ապացույցները չեն կարող դրվել Հանձնաժողովի կողմից կայացվող որոշման հիմքում:

142. Կարգապահական գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

143. Ապացույցները կարող են ներկայացնել Հայցվորը, Պատասխանողը կամ երրորդ անձինք:

144. Ապացույցները Հանձնաժողով բերելու անհնարինության կամ դժվարության դեպքում Հանձնաժողովը կողմերի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ իրավունք ունի դրանք զննել և հետազոտել գտնվելու վայրում:

145. Անհրաժեշտության դեպքում ապացույցների զննմանը և հետազոտմանը կարող են մասնակից դարձվել փորձագետներ և վկաներ:

146. Նախկինում քննված և սահմանված կարգով ուժի մեջ մտած դատարանի վճռով կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի որոշումով հաստատված հանգամանքները Հանձնաժողովում Կարգապահական գործը քննելիս կրկին չեն ապացուցվում:

147. Հանձնաժողովը յուրաքանչյուր ապացույց գնահատում է Կարգապահական գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա՝ հիմնված ներքին համոզմամբ: Հանձնաժողովի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ սույն կանոնակարգի 146. կետում նախատեսված դեպքերի:

148. Գրավոր ապացույցներ են Կարգապահական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերն ու նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները:

149. Գրավոր ապացույցները ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Եթե քննվող Կարգապահական գործին վերաբերվում է փաստաթղթի միայն մեկ մասը, ապա ներկայացվում է դրա պատշաճ վավերացված քաղվածքը:

Փաստաթղթերի բնօրինակները ներկայացվում են այն դեպքերում, եթե Կարգապահական գործի հանգամանքները կարող են հաստատվել միայն նման փաստաթղթով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի պահանջով:

150. Կարգապահական գործում գտնվող փաստաթղթերի բնօրինակները, դրանք ներկայացրած անձանց միջնորդությամբ, վերադարձվում են Հանձնաժողովի կողմից կայացված որոշման օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Այս դեպքում գործում թողնվում է փաստաթղթի պատճենը կամ քաղվածքը:

Գլուխ 27. Կարգապահական գործի քննության ընթացքում փորձաքննության իրականացումը

151. Կարգապահական գործի քննության ժամանակ գիտության, տեխնիկայի կամ այլ բնագավառում հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով Հանձնաժողովը կարող է Հայցվորի կամ Պատասխանողի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն անցկացնելու համար փորձագետ նշանակել: Հայցվորի (բացառությամբ, եթե Հայցվորը Վերահսկող ծառայությունն է) կամ Պատասխանողի միջնորդությամբ նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերի համար վճարում է համապատասխանաբար Հայցվորը կամ Պատասխանողը: Հանձնաժողովի կամ Հայցվորի (Վերահսկող ծառայության) նախաձեռնությամբ նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերը կատարվում են Կարգապահական գործի ծախսերի հաշվին, բացառությամբ այն դեպքի, երբ հայցը բավարարվում է: Հայցի բավարարման դեպքում փորձաքննության հետ կապված ծախսերը կատարվում են Պատասխանողի կողմից:

152. Հայցվորը և Պատասխանողը իրավունք ունեն ներկա գտնվել փորձաքննությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ներկայությունը կարող է խանգարել փորձագետի բնականոն աշխատանքին:

153. Հայցվորը և Պատասխանողը իրավունք ունեն առաջադրել փորձաքննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցեր:

154. Փորձաքննություն նշանակելու մասին Հանձնաժողովը կայացնում է որոշում, որում սահմանվում են հարցերի ցանկը և բովանդակությունը:

155. Հայցվորը և Պատասխանողը իրավունք ունեն փորձագետին հարցեր տալ՝ գիտելիքների համապատասխան բնագավառում նրա գիտակ լինելը պարզելու համար:

156. Փորձագետ նշանակելու մասին Հանձնաժողովը կայացնում է որոշում: Հանձնաժողովը նախազգուշացնում է փորձագետին՝ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար պատասխանատվության մասին: Հանձնաժողովը փորձագետից ստորագրություն է վերցնում նախազգուշացման մասին, որը կցվում է Կարգապահական գործի նյութերին:

157. Փորձագետի եզրակացությունը կազմվում է գրավոր: Այն պետք է պարունակի՝

- 1) նշում կիրառված մեթոդների մասին,
- 2) կատարված հետազոտությունների մանրամասն նկարագրությունը,
- 3) առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները:

158. Եթե փորձագետը փորձաքննություն կատարելիս պարզում է Կարգապահական գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, որոնց կապակցությամբ նրան հարցեր չեն առաջադրվել, նա իրավունք ունի այդ հանգամանքների վերաբերյալ հետևություններն արտացոլել իր եզրակացությունում:

159. Փորձագետի եզրակացությունը հետազոտվում է Հանձնաժողովի նիստում և գնահատվում է մյուս ապացույցների հետ միասին:

160. Փորձագետի եզրակացության անբավարար պարզության կամ լիարժեք չլինելու դեպքում Հանձնաժողովը սույն գլխով սահմանված կարգով կարող է նշանակել կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով այլ փորձագետների:

Գլուխ 28. Կարգապահական գործի Վկա

161. Յուրաքանչյուր Վկա հարցաքննվում է առանձին: Վկան Հանձնաժողովին ցուցմունքներ է տալիս բանավոր: Վկան Հանձնաժողովի առաջարկությամբ կարող է իր ցուցմունքները շարադրել գրավոր:

162. Վկայի հաղորդած տեղեկություններն ապացույց չեն, եթե նա չի կարող հստակ նշել իր իրազեկության աղբյուրը:

163. Վկան պարտավոր է ճիշտ ցուցմունքներ տալ, պատասխանել Հանձնաժողովի, Հայցվորի և Պատասխանողի հարցերին:

164. Կարգապահական գործին մասնակցող անձանց բացատրությունները, Կարգապահական գործի համար նշանակություն ունեցող իրենց հայտնի հանգամանքների մասին, ստուգվում և գնահատվում են մյուս ապացույցների հետ միասին:

165. Կարգապահական գործին մասնակցող անձի կողմից այն փաստն ընդունելը, որի միջոցով մյուս անձը հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները, պարտադիր չեն Հանձնաժողովի համար: Հանձնաժողովը կարող է ընդունված փաստը համարել հաստատված, եթե կասկածներ չկան, որ դա համապատասխանում է գործի հանգամանքներին, և կողմն այն չի ընդունել խաբեության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով կամ ճշմարտությունը թաքցնելու նպատակով:

Գլուխ 29. Կարգապահական գործի ծախսերը

166. Կարգապահական գործի քննության հետ կապված ծախսերը կազմված են փորձագետին, Վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու և կարգապահական քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

167. Կարգապահական գործին Հայցվորի և Պատասխանողի միջև Կարգապահական գործի քննության հետ կապված ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում Հանձնաժողովը որոշում է կայացնում դրան համապատասխան:

Գլուխ 30. Հանձնաժողովի որոշումները

168. Հանձնաժողովի (Հանձնաժողովի նախագահի) որոշումը պետք է լինի օրինական և հիմնավորված: Հանձնաժողովի (Հանձնաժողովի նախագահի) որոշումը հիմնավորվում է հետազոտված ապացույցներով և կայացվում է համապատասխան գործի քննման ավարտից հետո՝ առանձին սենյակում (բացառությամբ Կարգապահական գործի արագացված քննության): Այդ սենյակում կարող են գտնվել միայն գործը քննած Հանձնաժողովի նախագահը, Հանձնաժողովի անդամները և Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը:

169. Հանձնաժողովի (Հանձնաժողովի նախագահի) կողմից ընդունված որոշումը Հայցվորի կամ Պատասխանողի կողմից կարող է բողոքարկվել Հանձնաժողովին կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին՝ որոշումը ստանալու պահից 10 օրվա ընթացքում:

170. Հանձնաժողովի նիստում որոշումների ընդունման ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Հանձնաժողովի նախագահը քվեարկում է վերջում:

Որոշման ընդունման ժամանակ ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

171. Հանձնաժողովի նիստում որոշումը կայացնելուց անմիջապես հետո Հանձնաժողովի նախագահը նիստում հրապարակում է որոշման եզրափակիչ մասը, ինչպես նաև պարզաբանում է որոշման բողոքարկման կարգը:
172. Գործի արագացված քննության դեպքում հանձնաժողովի որոշումը նիստում չի հրապարակվում:
173. Որոշման եզրափակիչ մասը հրապարակելուց, իսկ Կարգապահական գործի արագացված քննության դեպքում որոշման վերաբերյալ Հանձնաժողովի անդամների համաձայնությունը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի նախագահը և պատասխանատու քարտուղարը պարտավոր են ստորագրել որոշման բնագիրը, որն էլ պետք է կցվի Կարգապահական գործին:
174. Հանձնաժողովի որոշման բնագրի կազմումը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան հինգ աշխատանքային օրով:
Սույն կանոնակարգով սահմանված դեպքերում անհատական որոշում կայացնելից, Հանձնաժողովի նախագահի որոշումը ստորագրվում է անմիջապես:
175. Հանձնաժողովի (Հանձնաժողովի նախագահի) որոշումը սույն կանոնակարգով սահմանված կարգով ստորագրման պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով ուղարկվում է Հայցվորին, Պատասխանողին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին:
176. Հանձնաժողովի նախագահը կամ Հանձնաժողովի անդամը, որը համաձայն չէ որոշման հետ, իրավասու է կազմել և ընդունված որոշմանը կցել իր հատուկ կարծիքը, որը հանդիսանում է այդ որոշման անբաժանելի մասը:

Գլուխ 31. Հանձնաժողովի նիստերի ձայնագրառումը

177. Հանձնաժողովի նիստերը պարտադիր կարգով պետք է ձայնագրվեն:
178. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը Հայցվորի կամ Պատասխանողի համապատասխան դիմումի դեպքում դիմումի ներկայացման պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուի կողմից տրամադրված և Օպերատորի կողմից ընդունելի կրիչով տրամադրում է Հայցվորին կամ Պատասխանողին ձայնագրառման օրինակը:
179. Կարգապահական գործի արագացված քննության դեպքում Հանձնաժողովի նիստը չի ձայնագրվում:

Գլուխ 32. Հանձնաժողովին տեղեկատվության տրամադրումը

180. Հանձնաժողովը (Հանձնաժողովի նախագահը) իրավասու է բոլոր հանգամանքների բազմակողմանի և ճշգրիտ հետազոտման իրականացման համար Թողարկողների, Շուկայի մասնակիցների և Օպերատորի մարմինների ղեկավարներից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջել Կարգապահական գործի հետ առնչվող տեղեկատվություն:
181. Սույն կանոնակարգի 180. կետում նշված տեղեկատվության տրամադրման հարցումը ուղարկվում է հասցեագրված գրավոր տեսքով փոստային հաղորդագրությամբ, պատվիրված նամակի միջոցով, ֆաքսով, էլեկտրոնային փոստով կամ այլ ճանապարհով:
182. Թողարկողը, Շուկայի մասնակիցը, Օպերատորի մարմինը կամ պաշտոնատար անձը, ում ողջվում է հարցումը, պարտավոր է հարցման ստացման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել դրանում ընդգրկված հարցերի պատասխանները կամ

հիմնավորված մերժում՝ համապատասխան տեղեկատվության ներկայացման անհնարինության մասին:

ԲԱԺԻՆ V. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գլուխ 33. Կարգապահական տույժերի ձևերը և դրանք կիրառող մարմինները

183. Կարգապահական խախտումներ կատարելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝
- 1) նախազգուշացում.
 - 2) տուգանք.
 - 3) առևտրի իրավունքի կասեցում.
 - 4) արժեթղթերի առևտրին թույլտվության (ցուցակման) կասեցում.
 - 5) շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցում.
 - 6) Շուկայի մասնակցի կարգավիճակի դադարեցում.
 - 7) արժեթղթերի առևտրին թույլտվության դադարեցում (ապացուցակում):
184. Սույն կանոնակարգով նախատեսված տույժերը, բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքերի, կիրառվում են Կարգապահական հանձնաժողովի կողմից: Շուկա ստեղծողի կարգավիճակի, Շուկայի մասնակցի կարգավիճակի դադարեցման կամ արժեթղթերի առևտրին թույլտվության դադարեցման (ապացուցակման) մասին որոշումներն ընդունվում են Դիտորդ խորհրդի կողմից՝ Կարգապահական հանձնաժողովի միջնորդությամբ:

Գլուխ 34. Օպերատորի կանոնների պահանջները խախտելը

185. Եթե Օպերատորի կանոնների պահանջների առանձին խախտումների համար սույն կանոնակարգով այլ բան սահմանված չէ, ապա Օպերատորի կանոնների պահանջը խախտելը առաջացնում է՝
- նախազգուշացում՝ կարգապահական խախտումը վերացնելու հանձնարարությամբ կամ առանց դրա:*
186. Եթե Օպերատորի կանոնների պահանջների առանձին խախտումների համար սույն կանոնակարգով այլ բան սահմանված չէ, ապա Օպերատորի կողմից տրված հանձնարարականը չկատարելը կամ երեք ամսվա ընթացքում նույն կարգապահական խախտումը կատարելը առաջացնում է՝
- տուգանքի նշանակում հիստոն հազարից մինչև հարյուր հազար ՀՀ դրամի չափով՝ կարգապահական խախտումը վերացնելու հանձնարարությամբ կամ առանց դրա:*
187. Օպերատորի կողմից տրված հանձնարարականը դիտավորությամբ չկատարելը կամ այնպիսի վարքագիծ դրսևորելը, որն առանց էական պատճառների հանգեցնում է կամ կարող է հանգեցնել տրված հանձնարարականի ճիշտ և ժամանակին չկատարմանը, Օպերատորի վերահսկողական գործառույթների իրականացմանը խոչընդոտելը, ինչպես նաև նախատեսված կարգապահական տույժի նշանակման օրվանից մեկ ամսվա ընթացքում նույն կարգապահական խախտումը կատարելը (բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ տեսակի խախտումների կրկնության համար սույն կանոնակարգով սահմանված են այլ՝ հատուկ պատասխանատվության միջոցներ կամ պատասխանատվության միջոցների չկիրառման հնարավորություն) կամ սույն կանոնակարգի 60. կետով սահմանված այլ հիմքերի առկայությունը առաջացնում է՝

- 1) *տուգանքի նշանակում երկու հարյուր հիսուն հազար ՀՀ դրամի չափով և առևտրի իրավունքի կամ արժեթղթերի առևտրին թույլտվության (ցուցակման) կասեցում մեկ ամիս ժամկետով կամ*
- 2) *Շուկայի մասնակցի կարգավիճակի դադարեցում կամ արժեթղթերի առևտրին թույլտվության դադարեցում (ապացուցակում):*

188. Եթե Օպերատորի կանոնների պահանջների առանձին խախտումների համար սույն կանոնակարգով սահմանված են այլ՝ հատուկ պատասխանատվության միջոցներ, ապա Օպերատորի կողմից կիրառվում են հատուկ պատասխանատվության միջոցները:
 Եթե սույն կանոնակարգով խախտման համար սահմանվում է տուգանք, որի չափն որոշվում է խախտման բույժների հաշվարկով, ապա այդ դեպքում 15 (տասնհինգ) վայրկյանից ավել կազմող ոչ ամբողջական բույժն հաշվարկվում է որպես մեկ բույժ:
 Օպերատորի կանոնների ժամկետային պահանջների այն խախտումների համար, որոնց տևողությունը չի գերազանցում 15 (տասնհինգ) վայրկյանը, կարգապահական վարույթ չի հարուցվում և պատասխանատվության միջոցներ չի կիրառվում, եթե տվյալ խախտումը նույն ամսվա ընթացքում ընթացքում հանդիսանում է տվյալ պահանջի առաջին կամ երկրորդ խախտումը:

Գլուխ 35. Գնային չարաշահում կատարելը

189. Շուկայում առևտրին թույլատրված ֆինանսական գործիքով գնային չարաշահում կատարելը առաջացնում է՝

- 1) *տուգանքի նշանակում երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար ՀՀ դրամի չափով և առևտրի իրավունքի կամ արժեթղթերի առևտրին թույլտվության (ցուցակման) կասեցում մեկ ամիս ժամկետով կամ*
- 2) *Շուկայի մասնակցի կարգավիճակի դադարեցում կամ արժեթղթերի առևտրին թույլտվության դադարեցում (ապացուցակում):*

190. Սույն գլխի 189. կետով սահմանված կարգապահական խախտման համար նույն կետի 1) ենթակետով նախատեսված կարգապահական տույժի նշանակման օրվանից վեց ամսվա ընթացքում նույն կարգապահական խախտումը կատարելը առաջացնում է՝
տուգանքի նշանակում հինգ հարյուր հազար ՀՀ դրամի չափով և Շուկայի մասնակցի կարգավիճակի դադարեցում կամ արժեթղթերի առևտրին թույլտվության դադարեցում (ապացուցակում):

191. Առևտրային համակարգում ոչ դիտավորյալ այնպիսի գործարք կնքելը, որի արդյունքում գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում տեղի չի ունենում, առաջացնում է՝
տուգանքի նշանակում հարյուր հիսուն հազար ՀՀ դրամի չափով:

Գլուխ 36. Ներքին տեղեկատվության օգտագործման սահմանափակումը խախտելը

192. Օրենքի, դրանից բխող նորմատիվ իրավական ակտերի և Օպերատորի կանոնների խախտումով ներքին տեղեկության օգտագործմամբ շուկայում գործողություն կատարելը, այդ թվում ներքին տեղեկության տրամադրելը, դրա հիման վրա խորհուրդ տալը կամ առաջարկություն անելը առաջացնում է՝

- 1) *տուգանքի նշանակում հարյուր հիսուն հազարից մինչև երեք հարյուր հիսուն հազար ՀՀ դրամի չափով և առևտրի իրավունքի կամ արժեթղթերի առևտրին թույլտվության (ցուցակման) կասեցում մեկ ամիս ժամկետով կամ*

2) Շուկայի մասնակցի կարգավիճակի դադարեցում կամ արժեթղթերի առևտրին թույլտվության դադարեցում (ապացուցակում):

193. Սույն գլխի 192. կետով սահմանված կարգապահական խախտման համար նույն կետի 1) ենթակետով նախատեսված կարգապահական տույժի նշանակման օրվանից վեց ամսվա ընթացքում նույն կարգապահական խախտումը կատարելը առաջացնում է՝
տուգանքի նշանակում երեք հարյուր հազար ՀՀ դրամի չափով և Շուկայի մասնակցի կարգավիճակի դադարեցում կամ արժեթղթերի առևտրին թույլտվության դադարեցում (ապացուցակում):

Գլուխ 37. Շուկա ստեղծողին ներկայացվող պահանջների խախտումը

194. Առևտրային նստաշրջանի բացման պահից առավելագույնը տաս րոպե հետո մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը տվյալ դասի արժեթղթերով անընդհատ երկկողմանի գնանշում չապահովելը (բացառությամբ երկկողմանի գնանշման ընթացքում գնման և/կամ վաճառքի հայտի բավարարման դեպքի) առաջացնում է՝

- 1) տուգանքի նշանակում մեկ հազար ՀՀ դրամի չափով խախտման յուրաքանչյուր րոպեի համար, բայց ոչ ավել քան քսանհինգ հազար ՀՀ դրամը, եթե խախտումը վերացվել է մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը.
- 2) տուգանքի նշանակում երկու հազար ՀՀ դրամի չափով խախտման յուրաքանչյուր րոպեի համար, բայց ոչ ավել քան հիսուն հազար ՀՀ դրամը, եթե խախտումը վերացվել է մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը և թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում երկրորդ անգամ.
- 3) տուգանքի նշանակում երեք հազար ՀՀ դրամի չափով խախտման յուրաքանչյուր րոպեի համար, բայց ոչ ավել քան յոթանասուհինգ հազար ՀՀ դրամը, եթե խախտումը վերացվել է մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը և թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում երրորդ անգամ.
- 4) տուգանքի նշանակում չորս հազար ՀՀ դրամի չափով խախտման յուրաքանչյուր րոպեի համար, բայց ոչ ավել քան հարյուր հազար ՀՀ դրամը, եթե խախտումը վերացվել է մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը և թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում չորրորդ անգամ.
- 5) տուգանքի նշանակում մեկ հազար ՀՀ դրամի չափով խախտման յուրաքանչյուր րոպեի համար, եթե խախտումը չի վերացվել մինչև առևտրային նստաշրջանի փակման պահը, բայց ոչ ավել քան երկու հարյուր հազար ՀՀ դրամը.
- 6) տուգանքի նշանակում հինգ հարյուր հազար ՀՀ դրամի չափով և տվյալ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցում, եթե խախտումը մեկ ամսվա ընթացքում կրկնվել է 5 (հինգ) և ավելի անգամ:

195. Երկկողմանի գնանշման ընթացքում տվյալ դասի արժեթղթերով գնման և/կամ վաճառքի հայտի բավարարման դեպքում երեք րոպեում նոր երկկողմանի գնանշում չապահովելը կամ գործարքի արդյունքում խախտված նվազագույն գնանշման ծավալի կամ սպրեդի չափը՝ սահմանված չափով չապահովելն առաջացնում է՝

- 1) տուգանքի նշանակում մեկ հազար ՀՀ դրամի չափով խախտման յուրաքանչյուր րոպեի համար, բայց ոչ ավել քան քսանհինգ հազար ՀՀ դրամը.
- 2) տուգանքի նշանակում երկու հազար ՀՀ դրամի չափով խախտման յուրաքանչյուր րոպեի համար, բայց ոչ ավել քան հիսուն հազար ՀՀ դրամը, եթե խախտումը թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում երկրորդ անգամ.

- 3) *տուգանքի նշանակում երեք հազար ՀՀ դրամի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, բայց ոչ ավել քան յոթանասուհինգ հազար ՀՀ դրամը, եթե խախտումը թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում երրորդ անգամ.*
 - 4) *տուգանքի նշանակում չորս հազար ՀՀ դրամի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, բայց ոչ ավել քան հարյուր հազար ՀՀ դրամը, եթե խախտումը թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում չորրորդ անգամ.*
 - 5) *տուգանքի նշանակում չորս հարյուր հազար ՀՀ դրամի չափով և տվյալ դասի արժեթղթերի Շուկա ստեղծողի կարգավիճակի դադարեցում, եթե խախտումը մեկ ամսվա ընթացքում կրկնվել է 5 (հինգ) և ավելի անգամ:*
196. *Նույն առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ դասի արժեթղթերի երկկողմանի գնանշման փաստացի կատարված յուրաքանչյուր երեք փոփոխության հաշվարկով տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում առնվազն մեկ գործարք չկնքելն առաջացնում է՝*
տուգանքի նշանակում հարյուր հազար ՀՀ դրամի չափով:
197. *Առևտրային նստաշրջանի ընթացքում նվազագույն գնանշման ծավալի և/կամ սարեդի պահանջների խախտման դեպքում (բացառությամբ գործարքի արդյունքում խախտման դեպքի) Շուկա ստեղծողի կողմից դրանց սահմանված չափերը չվերականգնելն առաջացնում է՝*
տուգանքի նշանակում մեկ հազար ՀՀ դրամի չափով խախտման յուրաքանչյուր թույլի համար, բայց ոչ ավել քան երկու հարյուր հազար ՀՀ դրամը:
198. *Շուկա ստեղծողի կարգավիճակից հրաժարվելու դեպքում վերահաշվարկված վճարների գումարը համապատասխան Հաշիվ-սպրանքագիրը ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում չվճարելն առաջացնում է՝*
տուգանքի նշանակում հարյուր հիսուն հազար ՀՀ դրամի չափով:
199. *Օպերատորի կանոնների ժամկետային պահանջների խախտելը, որի տևողությունը չի գերազանցում 15 (տասնհինգ) վայրկյանը, առաջացնում է՝*
- 1) *տուգանքի նշանակում երեք հազար ՀՀ դրամի չափով, եթե նույն պահանջի խախտումը թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում երրորդ անգամ.*
 - 2) *տուգանքի նշանակում չորս հազար ՀՀ դրամի չափով, եթե նույն պահանջի խախտումը թույլ է տրվել նույն ամսվա ընթացքում չորրորդ անգամ.*
 - 3) *սույն կանոնակարգի 194. կետի 6)-րդ ենթակետով կամ 195. կետի 5)-րդ ենթակետով սահմանված կարգապահական տույժերը, եթե այդ կետերով նախատեսված համապատասխան խախտումները մեկ ամսվա ընթացքում կրկնվել են 5 (հինգ) և ավելի անգամ.*
 - 4) *տուգանքի նշանակում հիսուն հազարից մինչև հարյուր հազար ՀՀ դրամի չափով և առևտրի իրավունքի կասեցում մեկ ամիս ժամկետով կամ Շուկայի մասնակցի կարգավիճակի դադարեցում, եթե երեք ամսվա ընթացքում 15 (տասնհինգ) վայրկյանը չգերազանցող նույն կարգապահական խախտումը թույլ է տրվել 10 (տաս) և ավելի անգամ:*

Գլուխ 38. Կարգապահական խախտման համար սահմանված տուգանքը չվճարելը

200. *Կարգապահական խախտման հետևանքով «տուգանք» կարգապահական տույժի նշանակման մասին որոշմամբ սահմանված պարտադիր վճարը որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում չկատարելը առաջացնում է՝*
տույժի նշանակում՝ տուգանքի վճարման ուշացման յուրաքանչյուր օրվա համար տուգանքի գումարի 1%-ի (մեկ տոկոսի) չափով, բայց ոչ ավել, քան տուգանքի գումարը՝ տուգանքը սահմանված ժամկետում վճարելու հանձնարարականով կամ առանց այդպիսի

հանձնարարականի, եթե տույժի նշանակման օրվա դրությամբ տուգանքն արդեն վճարված է:

201. Սույն գլխի 200. կետում նշված կարգապահական խախտման համար նույն կետով տրված հանձնարարականը սահմանված ժամկետում չկատարելը կամ տույժի չվճարումը առաջացնում է՝

Շուկայի մասնակցի կարգավիճակի դադարեցում կամ արժեթղթերի առևտրին թույլտվության դադարեցում (ապացուցակում):

Գլուխ 39. Օպերատորի կողմից պարզեցված ընթացակարգով կիրառելի կարգապահական պատասխանատվության միջոցները

202. Շուկայի մասնակցի կամ Թողարկողի կողմից թույլ տրված խախտման համար Օպերատորի կողմից պարզեցված ընթացակարգով ընդունված որոշմամբ Օպերատորը կարող է՝

- 1) կասեցնել Շուկայի մասնակցի առևտրի իրավունքը մեկ առևտրային օրով, եթե Շուկայի մասնակցից, որի հաշվին վերջնահաշվարկի ընթացքում սխալմամբ ավել միջոցներ են փոխանցվել, ավել ստացված միջոցները հետ փոխանցելու՝ Օպերատորի կանոններով սահմանված, պահանջները կատարել է սահմանված ժամկետի խախտումով, սակայն նույն աշխատանքային օրվա ընթացքում և դրանով չի վտանգել (ձախողել) տվյալ առևտրային օրվա վերջնահաշվարկը.
- 2) կասեցնել Շուկայի մասնակցի առևտրի իրավունքը մեկ ամիս ժամկետով, եթե Շուկայի մասնակցից չի կատարել ավել ստացված միջոցները հետ փոխանցելու Օպերատորի կանոններով սահմանված պահանջները.
- 3) կասեցնել Շուկայի մասնակցի առևտրի իրավունքը մինչև այն օրվա առևտրային նստաշրջանի սկիզբը, որի նախորդ օրը Շուկայի մասնակցից կվճարի այն վճարները, որոնց վճարումը նախատեսված է Օպերատորի կանոններով, որոշումներով կամ Օպերատորի և Շուկայի մասնակցի միջև կնքված պայմանագրով, եթե տվյալ վճարումը չի կատարվել սահմանված ժամկետում.
- 4) կասեցնել Թողարկողի արժեթղթերի առևտրին թույլտվությունը մինչև այն օրվա առևտրային նստաշրջանի սկիզբը, որի նախորդ օրը Թողարկողը կվճարի այն վճարները, որոնց վճարումը նախատեսված է Օպերատորի կանոններով, որոշումներով կամ Օպերատորի և Թողարկողի միջև կնքված պայմանագրով, եթե տվյալ վճարումը չի կատարվել սահմանված ժամկետում.
- 5) Շուկայի մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակցի կողմից ռեպո/սվոպ-հետադարձ գործարքի կնքման ժամկետի խախտման դեպքում (բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում Օպերատորի կանոններով սահմանված կարգով հետաձգվում է ռեպո/սվոպ-հետադարձ գործարքի կնքման օրը, կամ տվյալ օրվա ընթացքում ռեպո/սվոպ գործարքի երկու կողմերից ստացվում է գրավոր տեղեկացում ռեպո/սվոպ-հետադարձ գործարքի կնքման օրը հետաձգելու մտադրության վերաբերյալ, որը տեխնիկական պատճառներով հնարավոր չի եղել իրականացնել առևտրային համակարգի միջոցով) կարգադրել Շուկայի մասնակցին՝ Օպերատորին վճարել տուգանք՝ սահմանված ժամկետում չկնքված ռեպո/սվոպ-հետադարձ գործարքի գումարի 0.1%-ի (գրո ամբողջ մեկ տասնորդական տոկոս) չափով, իսկ ռեպո կամ սվոպ գործարքի մյուս կողմ հանդիսացող Շուկայի մասնակցին վճարել տույժ՝ սահմանված ժամկետի խախտմամբ կնքված ռեպո/սվոպ-հետադարձ գործարքի գումարի 0.1%-ի (գրո ամբողջ մեկ տասնորդական տոկոս) չափով՝

- խախտման յուրաքանչյուր օրվա համար, եթե ռեպո/սվոպ-հետադարձ գործարքը կնքվել է սահմանված ժամկետի ավարտից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում.
- 6) սույն կետի 5) ենթակետում ներկայացված դեպքում ռեպո/սվոպ-հետադարձ գործարքը նշված ենթակետում սահմանված ժամկետում չկնքվելու դեպքում (բացառությամբ այն դեպքերի, երբ Օպերատորի կանոններով սահմանված կարգով մինչև ռեպո/սվոպ-հետադարձ գործարքի կնքման ժամկետի լրանալը լուծվում է ռեպո կամ սվոպ գործարքն ամբողջությամբ կամ միայն ռեպո/սվոպ-հետադարձ գործարքը) կարգադրել Շուկայի մասնակցին՝ Օպերատորին և ռեպո կամ սվոպ գործարքի մյուս կողմ հանդիսացող Շուկայի մասնակցին վճարել տուգանք՝ յուրաքանչյուրին խախտման արդյունքում չկնքված ռեպո/սվոպ-հետադարձ գործարքի գումարի 2.5%-ի (երկու ամբողջ հինգ տասնորդական տոկոս) չափով, բայց ոչ ավել քան մեկ միլիոն ՀՀ դրամի չափով.
 - 7) արտարժույթի հետառևտրային նստաշրջանի ավարտից հետո Օպերատորի կանոններին համապատասխան հաշվարկված՝ Օպերատորի առևտրային հաշվից Շուկայի մասնակցին փոխանցման ենթակա դրամային միջոցների գումարը բացասական նշանակություն ունենալու դեպքում կարգադրել Շուկայի մասնակցին՝ Օպերատորին վճարել տուգանք հիսուն հազար ՀՀ դրամի չափով.
 - 8) Օպերատորի կանոններին համապատասխան Հաշվարկային բանկում վարվող՝ Շուկայի մասնակցի դրամային հաշվից գումարի անակցեպտ գանձման ժամանակ Շուկայի մասնակցի հաշվում առկա դրամային միջոցների մնացորդը Օպերատորի անակցեպտ գանձման պահանջագրում նշված գումարն ամբողջությամբ գանձելու համար բավարար չլինելու դեպքում կարգադրել Շուկայի մասնակցին՝ Օպերատորին վճարել տուգանք տարբերության 2.5%-ի (երկու ամբողջ հինգ տասնորդական տոկոսի) չափով, ինչպես նաև կարգադրել Շուկայի մասնակցին՝ տվյալ օրը ժամկետային վարկային ռեսուրսներով կնքված գործարքների մարման հետ կապված բոլոր զուտ դրական դիրք ունեցողներին համամասնորեն վճարել տարբերությունը և տուգանք՝ տարբերության համամասնության 2.5%-ի (երկու ամբողջ հինգ տասնորդական տոկոսի) չափով:
 - 9) կարգադրել Շուկայի մասնակցին կամ Թողարկողին վճարել Օպերատորի կանոններով, Օպերատորի որոշումներով կամ Օպերատորի հետ կնքած պայմանագրով նախատեսված դրամական տույժերը և/կամ տուգանքները, եթե տվյալ դեպքում տվյալ խախտման համար նշված փաստաթղթերով նախատեսված է կոնկրետ դրամական տույժի և/կամ տուգանքի վճարում:
 Սույն ենթակետով սահմանված դրույթները կարող են կիրառվել նաև այն դեպքում, երբ խախտում թույլ տված անձը նախնական համաձայնություն է հայտնել առանց Կարգապահական գործի քննության վճարել տվյալ խախտման համար Օպերատորի կանոններով սահմանված առավելագույն դրամական տույժը և եթե տվյալ իրավիճակում այդ խախտումը արդեն չի հանգեցնում Օպերատորի կանոններով նախատեսված՝ կասեցման կամ դադարեցման գործընթացներից որևէ մեկի կիրառմանը.
 - 10) մինչև Օպերատորի Կարգապահական հանձնաժողովի և/կամ Խորհրդի կողմից կողմից որոշում կայացնելը, կասեցնել Շուկայի մասնակցի առևտրի իրավունքը կամ Թողարկողի արժեթղթերի առևտրին թույլտվությունը, եթե առկա են Շուկայի մասնակցի՝ Օպերատորի կանոններով նախատեսված, որևէ իրավունքի կամ Թողարկողի արժեթղթերի առևտրին թույլտվության դադարացման հիմքեր, և Օպերատորի իրավասու մարմինների կողմից Կարգապահական հանձնաժողովին հայց է ներկայացվել Շուկայի մասնակցի՝ Օպերատորի կանոններով նախատեսված

որևէ իրավունքի, կամ Թողարկողի արժեթղթերի առևտրին թույլտվության դադերացման (ապացուցակման) վերաբերյալ:

Գլուխ 40. Կանոնակարգում փոփոխությունները և լրացումները

203. Սույն կանոնակարգում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոնակարգով:

Գլուխ 41. Անցումային դրույթներ

204. Սույն կանոնակարգով սահմանված Կարգապահական հանձնաժողովի իրավասությունները, պարտականությունները, խնդիրներն ու գործառույթները մինչև Կարգապահական հանձնաժողովի ձևավորումը իրականացնում է Դիտորդ խորհուրդը, որը իրավունք ունի սույն կանոնակարգով նախատեսված նիստերը կազմակերպել հեռակա կարգով՝ հեռախոսակապի միջոցով, որին իրավունք ունեն մասնակցել բոլոր շահագրգիռ անձինք, որոնք օգտվում են սույն կանոնակարգով նախատեսված իրավունքներից: